

28

18377

ԱՄԵՐ - Գրիգորյան ԵՏԻ
Կառնայան Ընթր
Ես ԵԻ
2-րդ մս.
Ե. 1894.

391.99
S-38

1173

QITABI, VƏKTINDƏ KAQTARLNIZ
ВОЗВРАЩАЙТЕ КНИГУ В СРОК

1694/19

1206 25/VII

1929 1/XI

M. M. F. B.
2.2 y. p.

Neçə dəfə verilmişdir
Количество предыдущих выдач

11
1

891.99
57-38

258

CB 13

ԱՄ

ԿՐՈՒԱՊԱՏՉԱԲԸ

ԵՍ ԷԻ

ԿՕՍԵԴԻԱ-ՎՕԴԸՎԻԼ

5-35

ԵՐԿՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

(Ե Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն)

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԵՄԻՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

3

Печатана съ изданія 1881 г. съ исправленіями.

ЭРИВАНЬ

Типографія Эмина Теръ-Григорянцъ.

1894



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Дозволено цензурою. Тифлисъ, 20-го Апрѣля
1894 года.



1847
4
1894

Handwritten text in Georgian script at the top of the right page.

1
3 შვ. წყნარების მიწის
2 უმარტო მარტო: 113

30.

Handwritten text in Georgian script, possibly a title or header.

Handwritten text in Georgian script, possibly initials or a signature.

3003

ԽԱՂԱՅՈՂ ԱՆՁԻՆՔ

- ՄԻԽԱՆ, ԵԳՈՐԻՉ — Կոչեանց
- ՄԱՐԻԱ, նորա կինը: Ն
- ԳԷՈՐԳ, նոցա ծառան: Գրիգորեանց
- ԱՆՆԱ, նոցա աղախինը: Ն
- ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ, Միխայիլ Եգորիչի սիրելի
և մատրիմ ընկերը: — Յոխանիստան
- ԱՆՅԱՅՏ ՈՄՆ — — — Երուսաղիմ:
- ՇԱՐՄԱՆԿԱ ԱԾՈՂ } անտեսանելիք:
- ՓՈՔՐԻԿ ԵՐԳՉՈՒՂԻ }

Անցող պարտանք է Ռոսսիայի մէջ բազմա-
նէրից մէկն:

2003

ԿՌՈՒԱՊԱՏՃԱՌԸ

ԵՍ ԷՒ

ԿՕՄԵՂԻԱ — ՎՕԴԸՎԻՂ ԵՐԿՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ



ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Ը

Եսարանը ներկայացնում է նախասենեակ: Խորքում դուռը, որը բացում է փողոցի վերայ: Աջ կողմում երկու դուռը: առաջինը — դէպի հաղիսականները, Միխայիլ Եգորիչի սենեակներին է պատկանում, իսկ երկրորդը՝ ծառայի սենեակին: Չախ կողմում, դէպի խորքը, լուսամուտ, իսկ դէպի հանդիսականները մի դուռ, որ տանում է դէպի դահլիճը և տիկին Մարիայի սենեակները:

(Վարազդուր բարձրանալիս մենան օրբում է յատակը: Գէորգը ծածուկ դուրս է գալիս իւր սենեակից և մօտենում է ետևից նորան):

զգուշութեամբ խրումէ նորա աջ ուսին և ինքը, գիտենալով որ պիտի Աննան շուռգայ դէպի նոյն կողմը, թագնուումէ նորա ձախ կողմում:

Տ Ե Ս Ի Լ 1.

Ա Ն Ն Ա Ե ի Գ Է Ո Ր Գ

Ա.Ն.Ն.Ա.

Կարծես թէ մէկը իրեցից ուսիս...

(Մինչև Աննայի առաջին դիրք բռնելը, Գէորգը անցնումէ նորա ետերը: Նա դարձեալ խրումէ, բայց այս անգամ Աննան իսկոյն յետ է դառնում, և Գէորգը, չկարողանալով թագնուիլ կրկին անգամ, կանգնումէ առաջին և ձեռքը դնելով իւր կուրծքին, իբր թէ ամենայն խոնարհութեամբ և ժպիտով, գլուխ է տալիս նորան):

Ա.Ն.Ն.Ա.

Ա... բռնեցի, բռնեցի... էլի դու ու քո սատանայութիւնները:

Գ.Է.Ո.Ր.Գ, +աղցր

Ես ու սատանայութիւն... Ձէ, շատ է հեռու ինձանից այդ կոչումը: Ես... ես...

Ա.Ն.Ն.Ա.

Չլինի՞ր անմեղ հրեշտակ ես:

Գ.Է.Ո.Ր.Գ, դժգոհութեամբ

Ի... ի... ի... հարկէ:

Ա.Ն.Ն.Ա.

Այսինքն կռուացնող հրեշտակ...

Գ.Է.Ո.Ր.Գ

Ես...

Ա.Ն.Ն.Ա, «իբրով

Ապա ե՞ս: Գո արարմունքը չէ՞, որ էս բոսայէիս պարոնն ու տիկինը շուն ու կատու են

դառնել... էհէ, զգուշացիր հա... կբռնուես, յետոյ ձեռքներից չես պրծնիլ:

Գ.Է.Ո.Ր.Գ

Օօօ իմ հրեշտակս, իմ անմեղ տատարակս, ապա էն բան էր, որ երկու շաբաթ սորանից առաջ իմ գլուխս էին հանձնում: Տե՛սնումես, էս արարմունքից յետոյ ինձ ինչպէս հանգիստ են թողնում: Եթէ ես էսպէս չանէի, հիմա վաղուց էին ինձ դուրս արել ու իմ վեց-եօթ տարուայ ծառայութիւնս ոտնակոխ արել: Ես էլ էն ժամանակը ո՛ւր գնայի առանց բեզ:

Ա.Ն.Ն.Ա, խիտով

Իսկ եթէ ես նորանց հասկացնեմ...

Գ.Է.Ո.Ր.Գ

Օ, չէ, չէ, դու իմ անուշահոտ վարդս, դու իմ մանրաթերթիկ մանուշակս, դու իմ... դու իմ... (Վրա շէ գալիս, հասնումէ):

Ա.Ն.Ն.Ա, +հաղթար

Լաւ, լաւ, մի երկարացնիլ, կեղծաւոր ազուէս:

Գ.Է.Ո.Ր.Գ

Յեանոյ, յետոյ սանձեց իմ վարդն ու մանուշակը, իսկ քո կեղծաւոր ազուէսը... Յետոյ դու ինձ է՞դ աչքով ես նայում: Իմ միտքս էնէ որ՝ ոտքս էստեղ նուէն պնդացնեմ, քեզ հետ ջանասենք, ջան լսենք, մի ժամանակից յետոյ պսակուէնք, մի թեթեւ դուքան ունենանք ու մի կտոր հացի տէր լինենք ու դու էլ էդպէս...

... Գ. Ա. Ն. Ն. Ա., ...
Բաղդաւար:

ԳԵՈՐԳ

... Գ. Ա. Ն. Ն. Ա., ...
... Գ. Ա. Ն. Ն. Ա., ...
... Գ. Ա. Ն. Ն. Ա., ...

ԳԵՈՐԳ, ...

Եր լեզուիդ պտտանին մատուղ, մի բեր...
մի բեր...

Ա. Ն. Ն. Ա., ...

Սպասիր, սպասիր... մի բան էլ հարցնեմի
յետոյ:

ԳԵՈՐԳ, ...

Հը:

Ա. Ն. Ն. Ա.

Ախր մի ասա տեսնեմ, էդ ի՞նչ կնշանակի,
որ հրամայել են թէ նախաճաշը էտեղ նախա-
տեսնեակում պիտի ուտեն էսօր, ո՞վ է տեսել մի
էդ պիտի բան:

ԳԵՈՐԳ, ...

Ես ինքս էլ չեմ հասկանում, խաչը գիտե-
նա, բայց ի՞նչ անես, որ հրամայում են. էնտեղ
աւելի ուրախ է, ասում են, լուսամուտները փո-

ղոցի վերայ... էս է, էն է, ո՞վ է հասկանում:
Հրամայում են, պիտի կատարենք: Էս աթոռը
մաթոռըն էլ նոր բերեցի ես:

Ա. Ն. Ն. Ա., ...

Այ օյինբազ, ինչպէս երևում է լի քո սա-
տանայուլթիւններն են, էլի մի բան ունես երևի
մտքումդ: Պարզն ասա, պարզը:

ԳԵՈՐԳ, ...

Սուս կաց, վերջը կիմանաս. բայց եթէ պա-
րոնը հարցնի, ասա տիկինը այսպէս հրամայեց,
տիկինը հարցնի, ասա պարոնը այսպէս հրամա-
յեց: Դու ասա, պատասխան տուողը ես եմ:

Ա. Ն. Ն. Ա.

Դէ էդպէս ասա է... Բայց չէ, ոչ կե-
րևամ, ոչ էլ ինձանից հարցնեն, որ ես էլ ստի-
պուեմ պատասխանելու: Դու գիտես նրանք:

ԳԵՈՐԳ, ...

Հա՛, ես քո հոգուն մեռնեմ հա: Դու քո-
լորովին լոյս մի ընկնիլ—ես գիտեմ, ամեն բա-
նը թող ինձ վերայ:

Այսպէս մինչև չանեմ հոգիս

Գլուխ պահել չեմ կարող

Եւ քեզ, միակ իմ հրեշտակիս,

Չեռքս գցել չեմ կարող:

Ա. Ն. Ն. Ա.

Այո, այո՛ գու՛ աշխատիր

Նպատակդ պսակել,

Բայց միմիայն զգուշացիր

Այդ բանում չը բռնուել:

ՄԻԱՍԻՆ

Այն ժամանակ միասինք մենք

Սուրբ պսակով միացած

Եւ կաշխատենք և կգործենք՝

Զեռքը ձեռքի միշտ տուած:

ԳԷՈՐԳ

Եւ մի քանի տարուց յետոյ

Մենք կուենանք սեփական

Եթէ ոչ տուն՝ գոնէ խանութ—

Պարապելու առարկան:

ԱՆՆԱ

Այն ժամանակ կվազվզեն

Մեր մի քանի մանկիկներ

Պապա, մամա, մեզ կկանչեն

Կուրախացնեն մեր սրտեր:

ՄԻԱՍԻՆ

Այն ժամանակ միասինք մենք

Անկեղծ սիրով միացած

Եւ կաշխատենք և կգործենք

Զեռքը ձեռքի միշտ տուած: *)

ԳԷՈՐԳ, Տօբեմալով

Ապա... հիմա... չե՞ս թողնիլ մի... մի...
անգամ...

*) Ս-ը 1, 2, 4 և 5 տեղը գիտի երբեք. На гора въ лесу те-
вистомъ три богини межъ собой և այլն, երբեք տուն եղան-
աւ, եւ 3 և 6 տեղը, որտեղ երբեք տեղաւնի, այն երբեք երբեք որտեղ
գտնուի, որ է. Пресмыкшыя три дамы և այլն:

(Աննան կամենումէ ձեռքից ազատուել, վազումէ ալ և ձախ
բեմի վերայ, բայց Գէորգը վերջապէս բռնումէ նորան և կպնումէ
կուրծքին):

ԳԷՈՐԳ

Ես ամեն բան յանձս եմ առնում քու մի
պաշի համար, իսկ դու... դու... (համբարով)
էս մէկ... էս էրկու... (խորտի դուրսը բացուած և
ներս է մտնում Գրիգոր Աբրահամը)

ՏԵՍԻԼ 2.

ՆՈՅՆԵ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԱՐՐԱՍԻՉ

ԳՐԻԳՈՐ ԱՐՐԱՍԻՉ

Ա՛խ, ինչ վատ ժամանակ ներս մտայ, նե-
րողութիւն:

ԱՆՆԱ, փախելով

Ա՛խ...

ԳԷՈՐԳ

Ո՛չինչ, իսկ ինձ համար ամենալաւ ժամա-
նակն այս էր. համեցէք:

ԳՐԻԳՈՐ ԱՐՐԱՍԻՉ

Միխայիլ եգորիչը տա՛նն է:

ԳԷՈՐԳ

Այո:

ԳՐԻԳՈՐ ԱՐՐԱՍԻՉ

Իսկ տիկինը:

ԳԷՈՐԳ

Նոյնպէս:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ
Գնա, յայտնիր տիկինիդ. որ ես եկել եմ:
ԳԷՈՐԳ, ԿԱՆՁՆԵՆ

Է՛է... սա որ եկաւ տիկնոջ մօտ՝ շատ
կնատի, իսկ շարմանկայ ածողը հիմա կգայ. սա
որ էստեղ լինի՝ լաւ չէ. հարկաւոր է ճանա-
պարհ գնել:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ

Էլ ի՞նչ ես կանգնել. գնա, շուտ արա:

ԳԷՈՐԳ

Ասումէք պարօնին յայտնեմ, այս բոպէիս
(Հայտնի էրէպի պարօնի ԿԱՆՁՆԵՆ):

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ, ԿԱՆՁՆԵՆԵՆԸ

Չէ, չէ, տիկինիդ յայտնիր, տիկինիդ:

ԳԷՈՐԳ

Տիկինիս... Նա ասել է որ ոչ ոքի չթող-
նեմ ներս:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ

Գնա, ես քեզ ասումեմ, յայտնիր իմ անու-
նը: Քեզ ինչ ասումեն էն կատարիլ:

ԳԷՈՐԳ

Ախր...

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ, ԳԷՈՐԳԻՆ ԿԱՆՁՆԵՆԸ ԵՎ ԿԵՆԸ
ԿԵՄԻ ԿԵՆՆՈՋ ԿԱՆՁՆԵՆ

Ախր-մախրի ժամանակ չէ, շուտ արա. թէ
չէ ինքս առանց յայտնելու ներս կմտնեմ: Վեր-
ջապէս տիկնոջը նշանակած ժամանակին եմ ե-
կել, հասկանումես թէ՛ չէ. չի կարող չնդունել:
(Կանգնուի ինչը ներս մտնել):

ԳԷՈՐԳ

Գնում եմ, պարոն, գնում եմ, ի սէր Աս-
տուծոյ թողէք յայտնեմ. մի փոքր սպասեցէք,
պարոն: (Կանգնուի է և հարձուսի):

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ, ԿԱՆՁՆԵՆԵՆԸ

Գու՛ր այստեղ ինչպե՞ղ ես:

ԳԷՈՐԳ

Հրամաններ կատարող:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ, Բարկայած

Ես քեզ հրամայում եմ գնա և իսկոյն յայտ-
նիր:

ԳԷՈՐԳ

Այս բոպէիս: (Գնում է):

ՏԵՍԻԼ 2.

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ, ԿԵՆ

Ա՛յ անասուն... (Մտնում է) Հա՛... պէտք է
վերջնական պատասխան տալ նորան: Հրմ... ես
ի՞նչպէս վերկենամ և նորա հետ գնամ արտա-
սահման: Մարգիկ ինչ կասեն... չէ որ երեսիս
կթքեն... Մինչև այժմ ո՛վ է իմանում թէ ինչ
յարաբերութիւն ունեմ սորա հետ: Իսկ եթէ
գնամ, արդէն պարզվում է ամեն բան և ո՛վ
գիտէ թէ ինչ կայծակներ պիտի թափեն գըլ-
խիս. թէ սորա մարզը և թէ բարեկամներս...
Չէ, պիտի կորահան ասելը որ չեմ կարող:

ՏԵՍԻԼ 3.

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ ԵՒ ԳԵՈՐԳ

ԳԵՈՐԳ, ներս ճարելով

Տեսա՞ք պարոն, չի կարողանում ընդունել-
գլուխը սաստիկ դաւում է. խնդրեց մի ժամից
յետոյ շնորհ բերել:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ, ներաչառ

Ի՞մ անունս տուեցիր:

ԳԵՈՐԳ

Այո, պարոն:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ

Ի՞նչպէս ասեցիր:

ԳԵՈՐԳ

Ասեցի Գրիգոր Աքրամիչը կամենում է...

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ, կարելով խօսուր

Իսկ նա՞ ինչ ասաց:

ԳԵՈՐԳ

Ասացին որ մի ժամից յետոյ շնորհ բերէք:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ, ինչը կասեցա՞ր ներս ճարել

է, է... Նա ինձ համար եղպէս բան չի
ասիլ. թէ խօսա՞ ես քո տեղ պատասխան կտամ:

ԳԵՈՐԳ, նորս և դուսն մէջ կանգնելով և խնդրելով

Պարոն, եթէ կարելի է մի ժամից յետոյ
շնորհ բերէք. իմ հացից զրկուելուս պատճառ
մի լինէք. առանց էնէլ այս մի ամիս է համա-
րեա՞ ամեն մի շնչին պատճառի համար հոգիս

հանում են. իսկ եթէ այդպէս անէք, ինձ մի
քոպէ չեն պահիլ:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ, շփոթելով

Լաւ, կգամ. մի ժամից յետոյ կգամ: (Գը-
նում է գլուխը շարժելով):

ՏԵՍԻԼ 4.

ԳԵՈՐԳ, ղայն

Հազիւ հազ սորա ձեռքից պրծանք, տօ:
Ա՛յ աներես... Իս նորա համար է հաստատ հա-
ւատացած, որ տիկինը անկարելի է շնդունի,
ինչէ՞... ինքն ու տիկինը... ըրր... գիտէք էլի
թէ ինչ յարաբերութիւն ունեն: Համա ում
ձանգն է ընկել... ինձ հրամայում է թէ գնա
յայտնիր, որ ես եկել եմ... ախր ի՞նչպէս կլի-
նի... հիմա ուր որ է կգայ շարմանկա ածողը...
Սա էլ էն սատանան է, որ իսկոյն բանից բան կհաս-
կանայ և ամեն բան կպորզուի... էն ժամանակ
ես ինչ անեմ: Դէ ասա ողջ ողջ գետինը մըտ-
նեմ էլի...

Դրսից լսում է արգանի ձայնը, որը ածում է օրու տեսել ես
երկնքումը երգի եղանակը և մի փոքրիկ աղկայ ձայն, որը եր-
զում է արգանի ձայն նոյն երգը:

ԳԵՈՐԳ

Ահա եկան, ածում են և երգում: Թաղէն
եկաւ, հինը դուրս (Փախում է իւր սենեակը):

ՏԵՍԻՆ 5.

ՄԻՒՍԻՆ ԵԳՈՐԻԶ, ներկայումս ներս հանելով

է՛լի, էլի էս շարմանչիկը... տէր իմ Աստուած (չսպելով է-ր Բարի-Նի-նը և Տարեկանը և սահմանը) Ըրը սիրելի. ասա տեսնեմ, ինչո՞ւ ես ամեն օր գալիս և ածու՞մ այդտեղ և երգում. քեզ կանչող կայ, թէ՛. **Մ Ս Յ**

ԴՐՍԻՑ 3այն

Ի հարկէ կանչող կայ, եթէ ինձ կանչող ու փող տուող չլինի, ես այստեղ ի՞նչ բան ունեմ՞

ՄԻՒՍԻՆ ԵԳՈՐԻԶ, նոյնպէս

Բայց ասա խնդրեմ, քեզ ո՞վ է ածել սուղ-ղը, փող տուողը. անշուշտ կճանաչես նորան:

ԴՐՍԻՑ

Ի հարկէ. նա փող տուող է, փող ուզող խօսք է, որ չճանաչեմ:

ՄԻՒՍԻՆ ԵԳՈՐԻԶ

Բայց ո՞վ է, չի՞ կարելի իմանալ:

ԴՐՍԻՑ

Փողը քեզանից խօսք չեմ ուզում, որ կամե-նում ես իմանալ թէ՛ ով է:

ՄԻՒՍԻՆ ԵԳՈՐԻԶ

Ախ, ես շատ լաւ եմ հասկանում. բայց մի պատճառ կայ, նորա համար եմ ես հետաքրքիր լինում:

ԴՐՍԻՑ

է՛, ձեր միտքն ինչէ. օրական մի երկու



շահի փող եմ ստանում. ուզում էք այն էլ ար-գելել ամալ: Եղա, փառքս զի զմեա գ-ւմ ընտ-րուող այս ան ՄԻՒՍԻՆ ԵԳՈՐԻԶ չ և ստանալու և խոտանում եմ քեզ, որ երբեք չեմ արգելի, միայն ասա իմանամ գոնէ, այդպէս յանգճա-բար վարվողը ինչ տեսակ անձն է:

ԴՐՍԻՑ

Երկու աչք, մի քիթ ունեցող, ու ինքն էլ մի լաւ սիրտ ունեցող անձն է. Սօփիա երգիր: (Լուս-ւմ է երգի և արգանի 3այնեքը կուէսէ Էրեկ):

ՄԻՒՍԻՆ ԵԳՈՐԻԶ, յուսայտա Բարի-Նեւեմ

էէէ... պարզ բան է, պարզ, բոլորովին պարզ է. այս բոլորը կնոջս արածն է. նա ինձ բարկացնելու համար է անում... Չտե՛սք շար-մանշնչիկը ինչ յանդուգն պատասխաններ տու-եց: Չէ. ես պիտի գնամ. անշուշտ պիտի հե-ռանամ այստեղից, վաղը և եթ արտասահման ես այլ ևս համբերել չեմ կարող (Բարեկամք Գը-նում է է-ր Էնեւել):

1847/41

ՏԵՍԻՆ 6.

ՄԱՐԻՍ, ներս գալով Բայն

Տեսնում էք, դարձեալ շարմանչիկը, հա-ւատացնում եմ ձեզ, որ այդպէս սովորեցրած է... Չէ, չափազանց անտանելի է ինձ այս մարդը. ահա թէ ինչ հնարքներով է կամենում ինձ զայ-րացնել: Ամեն օր շարունակաբար սոցա կանչել



է տալիս ու ինձ խելագարութեան է հասցը-
նում: Իւր ամեն մի մազաչափ շարժմունքներով
աշխատում է ինձ վրդովեցնել. ես այս բոլորը
տանել չեմ կարող... Անպատճառ, անպատճառ
պիտի գնալ արտասահման, հեռանալ և բոլորո-
վին մոռանալ սորան... (Ֆլեյց. ակունքները բռնած է):
Ձի, ինչպէս անախորժ ներդաշնակութիւն է.
ամեն մի ձայնի փոփոխութիւնը զգուանք է
պատճառում ինձ... Ի՞նչ երկար շարունակու-
մեն... (Ման է գալիս հարձելով) Գրիգոր Աբրա-
միչն էլ չեկաւ. նշանակած ժամանակն անցաւ.
բայց նա չկայ, իսկ սոքա իմ հոգին հանեցին...
(Չէրէն աստիճանի բարկացած և գնալով էր սենեակը)
Արտասահման, արտասահման պիտի գնալ:

ՏԵՍԻԼ 7.

ԳԵՈՐԳԸ ԿՐԻՍ ԳՆԱԼ ԶԻՅՈՒՆ ԵՆ ԴՅՈՒՆՈՒՆՎ ԵՆ ԿՐԻՍՈՒՆՎ
Այգպէս, այգպէս, ապրես. առ քու փողը:
(Երգեցողը-Բիւնը Կարտուճ է): Վազն էլ արի, մի-
ւս օրն էլ արի, էն միւս օրն էլ արի, հենց ա-
մեն օր արի. ոչինչ չեն կարող անել. ինչ որ
քեզ անելու լինեն էլ՝ պատասխանը իմ էս վզիս:
Միայն քեզ էլ եմ ասում. պարոնս ու տիկինս
ինչքան որ հարցնելու լինին, վախացնեն քեզ,
բոլորովին չվախենաս և իմ անունը երբէք չտաս:
ԶԱՅՆ ԿՐԻՍ

Ախր ինչո՞ւ համար ես դու էսքան փող փը-
չացնում, միտքդ ինչ է:

ԳԵՈՐԳ

Տօ քե՞զ ինչ: Դու ամեն օր արի, աճա ու
փողդ ստացիր. էլ ի՞նչ բանդ է՝ թէ ինչու հա-
մար եմ ես էսպէս անում:

ԳՐՍԻՑ

Իհարկէ. շնորհակալ եմ: մնաք բարով:
ԳԵՈՐԳ

Գնաս բարով: (Ձեռները Կրքեցող) է, էս էլ
էսպէս. ամեն բան իրա կարգով գնում է: Մին-
չև էսպէս չանենք՝ գլուխ չենք կարող պահել:
Հիմի ինչ պիտի անենք... Հ'ա, նախաճաշի պատ-
րաստութիւն պիտի տեսնել: (Սեղանը Կրքած է
Ֆլեյցը Գրքած է պատասխանաւր, Բերքած է Ֆլեյց
աստիճանի և գնալով և ըրով շինէր և այլն): Ապա ո՞ւր
է նա. ինչո՞ւ չի երևում. չլինի՞ մոռացել է...
(Սօսեանով լռաստիւն) Ա, դու էգտե՞ղ ես. արի.
լաւ ժամանակ է. բայց զգուշութեամբ: (Գնում
է նստ, անյայտի բռնը խոլ Կրքեցող յետոյ):

ՏԵՍԻԼ 8.

ԱՆՅԱՅՏ ՈՄՆ ԵՒ ՅԵՏՈՅ ՄԻՒԱԽԻ ԵԳՈՐԻՑ

ԱՆՅԱՅՏ ՈՄՆ

(Եսակարար ներս է մտնում մի անյայտ մարդ միջին դանից,
աչքը այս և այն կողմն է գցում, նկատում է պատից քաշած պալ-
տան, ձեռերը մեկնելով, կամենում է վեր բերել այն, բայց իսկոյն
պարոնի դուռ բացվում է և Միխայի Եգորիչը մի բանով կարծես ըզ-
բաղուած, չնկատելով նորան, անձանսթին, անցնում է գէպի դահ-
լիճի դուռը, իսկ անյայտը, նորան նկատելով, իսկոյն ուղղում է: Երբ
Միխայի Եգորիչը այլ ևս չի երևում, իսկոյն անյայտը կամենում է

նորէն վեր բերել պարտօն և դուրս թռչել, բայց դժբաղդաբար նորէն ուղղում է, երբ կրկին երևում է Միխայիլ Եղորիչը, վերադառնալով դահլիճից: Վերջինս նկատում է անձանօթին):

ՄԻԽԱԻԼ, ԵԳՈՐԻՉ, Բարի մէջ շեշտաւոր
Ի՞նչ էս ուղղում դու:
ԱՆՅԱՅՏ

Ներսէս Իվանիչին եմ հարցնում, պարօն առաջին որ այստեղ է:

(ՄԻԽԱԻԼ, ԵԳՈՐԻՉԸ, նայելէս)
Ի՞նչ ներսէս Իվանիչ. էդ անուշտով մարդ չկայ էս տանը:

(Եւ ինքը գնում է իւր սենեակը, բայց յանկարծ, մտաբերելով որ նախածառ պատրաստուած է նախասենեակում նորէն վերադառնում է այդ բանի պատճառը իմանալու համար: Բայց ինչ զարմանք, երբ նկատում է, որ նոյն անյայտը, իւր պարտօն մեխից հանելով, կամենում էր վեր բերել և իւր այսպիսի անպակալ վերադարձը պատճառ է եղել խեղճին մնալ նոյն դրութեան մէջ, արձանի պէս և երկիրից նայել իւր աչքերին: ՏԵՍԱՐԱՆ):

ՄԻԽԱԻԼ, ԵԳՈՐԻՉԸ, Բարիացած
Էդ ի՞նչ բանի վերայ էս:
ԱՆՅԱՅՏԸ, Դ՛ յետո՛ւ արբեւո՛ւ պալտօն
Սրբում եմ, պարօն:
ՄԻԽԱԻԼ, ԵԳՈՐԻՉ, Բարիացած

Գեղ ը՛վ է խնդրում սրբես, աւագակ. ես ծառայ չունեմ: Տեղիցդ շարժել չյանդզնես... Գէորգ, Գէորգ... (Անյայտ լայր է քրո՛ւ պալտօն և ճարտարիւճեմով քրո՛ւ է ընդհանուր Զարացած) Գէորգ... փախաւ, անյայտացաւ... Ես հասկանում եմ... էս ամենը կնոջս բաներն են. անշուշտ նա կրկին սովորեցրած էս փազուց...)

ՏԵՍԻԼ 9.

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ ԵՒ ԳԵՈՐԳ

ԳԵՈՐԳ, շատաւոր ներս է արնամ
Այստեղ, եմ պարօն, ի՞նչ էք կամենում:
ՄԻԽԱԻԼ, ԵԳՈՐԻՉ
Ձէ, լաւ կլինէր մի քանի ժամից յետոյ գայիր:

ԳԵՈՐԳ
Ձեռիս բան կար պարօն, ներողութիւն:
Հրամայեցէք:

ՄԻԽԱԻԼ, ԵԳՈՐԻՉ, Նեղացած
Ես հրամայում եմ այքիցս հեռանաս:
ԳԵՈՐԳ, Գլխիս պալտը և խելոյն
Այս րոպէիս: (Գնում է):
ՄԻԽԱԻԼ, ԵԳՈՐԻՉ, խելոյն

Բայց սպասիր: Էս ինչպէս էս նայում, որ օրը ցերեկը գալիս են գողութեան և դու թոյլ էս տալիս պալտօս գողանալու... (Մտաւով աստաբելով) Ատա... զգուշացիր, զգուշացիր կրկինում եմ. առանց էն էլ գիտես թէ էս այս քանի ժամանակ է, որքան անբաւական եմ քեզանից:

ԳԵՈՐԳ, ինչ լախիւնալով
Պարօն, ես ինքս մնացել եմ մոլորուած, թէև ձեզ բան չեմ ասել, բայց անցեալ օրը մէկի ձեռից ձեր նոր խալաթը խլեցի, որը կամենում էր ծախել մէկին տասը էփան: Ես տեսայ թէ չէ՛ իսկոյն ճանաչեցի, որ ձեր խալաթն է:

ուստի շորերից պինդ բռնելով կամեցայ քարշտալ ուղիղ Պօլիցիան, բայց ձեռքի ունեցած փայտով մի այնպիսի զօրութեամբ մէջքիս խբեց, որ ձեռքերս էլ դարձան սուքեր՝ և այնպէս չորս ոտանի հազիւ գցեցի ինձ տուն... Ի՞նչ անեմ պարոն, ինչպէս երևում է տանու գող է:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, յորի մէջ զբարոս
Տանու գող է... այդպէս է, այդպէս, Գէորգ. տանու գող է, տանու... Ես հասկանում եմ, դա իմ կնոջ արածն է. անպատճառ նորա արածն է...

ԳԵՈՐԳ

Ի՞նչ մի բան եմ նկատել, պարոն...
ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, խելոյն
Ի՞նչ:

ԳԵՈՐԳ

Ես շատ եմ ուշ դարձնում, բայց չեմ կարողանում վրայ հասնել:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, անհամբեր-ութեամբ
Ի՞նչ է, ի՞նչ...

ԳԵՈՐԳ

Այս քանի օր է. մի մարդ միշտ գալիս է և ականջ է ղնում այս տեղաբեքը, նամանաւանդ այն միջոցներում, երբ դուք և աղջիկ պարոնը...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Հասկացայ... երբ որ կուզում ենք իրար հետ:

ԳԵՈՐԳ

Այո, երբ որ վիճում էք:
ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, յրեւելով

Երբ որ վիճում ենք... երբ որ վիճում ենք... Հա՛, հա, հասկանում եմ... Ա՛յ իժի ծընունդ... այ սատանի զարմ... Այո, հասկանում եմ... դա կամենում է այդպիսով հաշտարար դատաւորի դիմի... (Գաղանական բարկութեամբ) Ախ կնանիք, կնանիք, ի՞նչ ասեմ... ի՞նչ անուանեմ ձեզ, որ սիրաս հովանայ... (Իբր կռիւտով իւր բարկութիւնը թափել Գէորգի գլխին) Բայց եթէ գիտես, որ այդպիսի մի մարդ ծածուկ ականջ է ղնում, ինչո՞ւ համար մինչև այժմ ինձ չես ասել, կամ այդպիսի մի մարդ, որ գողութիւն է անում, ինչո՞ւ չես զգուշանում... ինչո՞ւ դուրս չեկար իսկոյն, երբ քեզ կանչեցի:

ԳԵՈՐԳ, իբր վախեալով

Նախաճաշի պատրաստութիւն էի տեսնում:
ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ,

Նախաճաշի պատրաստութիւն էիր տեսնում... Բայց, հա՛. ես գլխաւոր հարցս մոռացայ. (ցոյց ստով ականին) Ե՞ս ինչ կնշանակի...

ԳԵՈՐԳ, իբր խելէ և վախով

Այդպէս է հրամայած:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, խելոյն

Ո՞ր է հրամայել:

ԳԵՈՐԳ

Տիկինը:

ՄԻԽԱԻԼ ԵՊՈՐԻՉ, զարհայած

Տիկիներ:

Այն:

ՄԻԽԱԻԼ ԵՊՈՐԻՉ, նոյնպէս

Ախր ի՞նչ կնշանակի էգ հրամանը... Եւ է տեսել, որ նախասնեակում հաց ուտեն... (Ուստի էր քար շրջանէր) Ձեմ հասկանում բաւորակին մի մտազաւփ անգամ խելքս չի հասնում դորան... (Մտաշուք է) Ձէ, մի գուտաս, գու՛րք խելքը ինչ է կտրում գրանից:

ԳԵՈՐԳ

Խելքս այնքան է կտրում, որ ինձ հրամայել են և ես իսկութեամբ կատարել եմ... Աամենաք բաւորն էլ այս բոպէիս տեղեց տեղ անեմ:

ՄԻԽԱԻԼ ԵՊՈՐԻՉ

Ձէ, չէ, թող մնա տեսնենք դորանով ինչ պէտք է անի... թող մնա: (Մտն է գալիս և խոր ծրարում Միջոց): Ախ, (Իջեւով ճակատին) տխմար գլուխ... միամիտ գլուխ... Այ այ այ այ... Այ սատանայական մտքեր... այ չարական գիւտական խորհուրդներով լի մտքեր... այ նախանձով ու կրքերով լի սիրտ... Ես հասկացայ... Այստեղ սեղան գցել տալով նախ ինձ է կամենում ճաքացնել իսկ յետոյ, որ կուր գցի և իսկոյն վկայ տանի գատաստանի մէջ այն անձին, որը այստեղարենք ման է գալիս և գողտուկ լսում ամենայն ինչ... Սորանից յետոյ ինձ

կարելի է մնալ այստեղարենք... Ձէ, չէ, արտասահման պէտք է գնացած... Բայց եթէ այն ականջ զնոզը ձեռս ընկնի այն է... այն է՛ ես գիտեմ... (Նայելով դէպի կնիւր դուռը) Իսկ դու Մարիա, կայծակնահար լինես, անգուճըն իջնես... կայծականց շանթեր մտնեն սիրտդ, Մարիա... աւելի բան չեմ ասում: (Բարհայած գրտում է իւր կողմը):

ՏԵՍԻԼ 10.

ԳԵՈՐԳ, Տիպն, Ռէ կուշար թիթալում է և յետոյ ասում

Սորանից պրծանք, մնաց հիմայ տիկիներ... է՛հ, Աստուծոյ ողորմութիւնով նորանից էլ կրպրծնենք... Կնիկ արմատից գլուխ հանելը թէև դժուար է, բայց ինձ համար՝ շատ հեշտ է: (Մտն է գալիս և թիթալում) Այ օյին... ես ու իմ հոգին, որ էս իմ իստեճակութեան համար, Աստուած դժողքումն էլ տեղ չի գտնի ինձ համար... Ինչ տեսակ չարչարանք որ տան է՞, մեր պապ սատանէքը՝ էլի քիչ է, շատ քիչ է... Բայց ի՞նչ արած, պիտի ապրենք՞ թէ չէ... Ապա ընկիր հալալութեան, արդարութեան ու ջերմեռանդութեան ետեւից, ես իմ Աստուած, որ փորը կշտացնելու համար մի կտոր չոր հաց չես գտնիլ... Ես աշխարքի կանոն ու սովորութիւն է...:

... Էսպէս եկել է, Էսպէս էլ կգնայ: Մարդ ու կնիկ կ'կռուեն, իսկ ծառան կմնայ... (Պէնդ թիթաղո՛ւ է և Գնո՛ւ):

Տ Ե Ս Ի Լ Ի Ի .
Մ Ա Ր Ի Ա Յ Ե Տ Ո Յ Գ Է Ո Ր Գ

Մ Ա Ր Ի Ա .

Էս ի՞նչ կնշանակի, չեմ հասկանում: անցեալ օրերը ծածկողիս չկար և մինչև հիմա չէ երեւում, իսկ այժմ շլեապաս չկայ: Անպատճառ սա մի նշանակութիւն ունի... (Աչքը բնական է պարսպապատ սեղանը): Ե՞ս ինչ է, նախաճաշի պատրաստութիւնը էտեղ են անե՞լ... նախասենեակի՞ւմ... Ես սորանից բան չեմ հասկանում... էլի մեր ծառայի յիմարութիւնները կլինին. ինչպէս երևում է կրկին հարբած պիտի լինի... Ձէ, գուրս պիտի արած. շատ ինքընուզուի բաներ է անում: (Կանչում է Բարիշա՛ն) Գէորգ... Գէորգ:

Գ Է Ո Ր Գ, Գ Ե Կ Ե Կ

Եկայ, տիկին (նշում է Գնո՛ւ): Ի՞նչ էք հրամայում:

Մ Ա Ր Ի Ա .

Ո՞վ է քեզ հրամայել, որ սեղանը էտեղ գնես:

Գ Է Ո Ր Գ

Պարօնը, տիկին:

Մ Ա Ր Ի Ա, Կ արձայա՛ն

Պարօնը... Գ Է Ո Ր Գ

Այո:

Մ Ա Ր Ի Ա, Կ արձայա՛ն

Ի՞նչպէս թէ պարօնը:

Գ Է Ո Ր Գ

Նորա այսպէս բարեհաճեցին, տիկին:

Մ Ա Ր Ի Ա

Իսկ գո՛ւ էլ կատարեցիր:

Գ Է Ո Ր Գ

Ի՞նչպէս կարող էի չկատարել, տիկին: Իսկ եթէ գու՛ր կբարեհաճէք գնել սալ իւր տեղը, նոյնպէս պատրաստ եմ կատարելու. կբարեհաճէք հրամայել: (Պարսպապատ է, որ հրամայելուս պէս իսկոյն կարտի):

Մ Ա Ր Ի Ա, Կ արձայա՛ն յեռը

Այո բոլորէիս որ իւր տեղում լինի այս պատրաստութիւնը... Ես չեմ կարող կռօների պէս ապրել:—Այ թէ ինչ կնշանակի կռօ ծընուել, էլի մի իւր պապական նախկին սովորութիւններից է կպել: (Ժպտում է) Բայց չէ, բայց չէ, սպասիր Գէորգ, սա կռօյութիւն չէ, նորա էս հրամանը նշանակութիւն ունի... Գնա, գնա, Գէորգ, ինչ որ տարար՝ նորէն բեր դիր տեղը. Ես բոլորը հասկացայ...

Գ Է Ո Ր Գ, յի կողմ

Ի՞նչ տեղն եմ լծել:

ՄԱՐԻԱ

Նա կամենում է ինձ զայրացնել, նա կամենում է ինձ ամեն կերպով ոտնակոխ անել— ես հասկանում եմ: Բայց թող անի՝ ինչ որ կամենայ, թող անի՝ հէնց ինչ ձեռից կգայ—իսկ ես էլ իմ գիտեցածս կանեմ: Ավերջնեմ իմ բերած բաժինքի բոլոր փողերս և Գրիգոր Աբրամիչին էլ հետս կտանեմ արտասահման և այնուհետև թող լինի, ինչ որ լինելու է. թող ինքըն իրա միտք կրճոտի, թէկուզ խելագարուի էլ— շատ եմ հոգս անում... Բայց Գրիգոր Աբրամիչը չեկաւ. մի վերջնական պատասխան չբառուեց ինձ... թէև հոգ չէ, որովհետև նա ինձ սիրում է, ուղիւ որ սիրում է... եթէ ջութըն էլ գցելու լինեմ, նա ինձ չէ չի ասիլ. նա ինձ հակառակիլ չի. նա իմ մի խօսքը երկու անիլ չի տալ: Այ, ինչ ասեմ մի էնտեսակ տղամարդի, սորապէս խօսմ ինարիգներ սարքող չէ, սորա պէս խօսմ բայղուշ չէ... Հա, հէնց հիմա գնամ մի նորա մօտ, Գրիգորիս մօտ, տեսնեմ ինչ է անում... (վարդաւ է գեպի էր գաւոր) Բայց յետոյ, մտքերէնով էր շլեւապէս զտնալը, իսկոյն կանգնում է և յետոյէր է գաւորում, կանգնելով Գրիգորի (հին) Գէորգ, ինչ եղար... յամացմ գմանայք սձ

Գրիգոր, ներս մտնելով շնչ քցոյ ձր
Այստեղ եմ, տիկին:
ՄԱՐԻԱ
Ո՛ր է իմ շլեւապաս, ո՞վ է տարել: —

Ո՛ր է Աննան, նա՞ ինչու չի երևում: մի՞ թէ նա գործ չունի:

ԳԵՈՐԳ

Աննան խոհանոցումն է, տիկին, իսկ շլեւապայի համար բարեհաճեցէք լսել. ես հէնց նոր փողոցից եկայ, նախաճաշի համար խաւարը պահասել էր, յանկարծ տեսնեմ մի մարդ ինձ տեսնելուն պէս՝ շորի տակ մի բան ծածկեց, ես նկատեցի այդ, տեսայ էլ որ շլեւապա էր: Իսկոյն կասկածանքս սաստկացաւ և նորա վզից բռնելով կանգնացրի, մի երկու անգամ, էս երեսին, էն երեսին, տեսնեմ վեր գցեց ու փախաւ: Նատ աշխատեցի բռնեմ ուղիւ Պօլիցէն քաջ տամ, բայց փախաւ. ես էլ վեր կալայ շլեւապան ու բերեցի տուն. մի փոքր ծալծլուել է, տիկին, բայց ուղղելը շատ հեշտ է:

ՄԱՐԻԱ, լարմանով

Այ աւազակ, էդ ե՞րբ է մտել ներս:

ԳԵՈՐԳ

Ձեմ հասկանում, տիկին, բայց երբ ես նորա ետիցը պինդ բռնեցի ու մի բանի վեր տուեցի, յետ դառաւ այս երեսիս մի այնպէս թարս կպցրեց, որ թարսուեցի. Ահա, բարեհաճեցէք նայել՝ դեռ տեղը կարմրած կլինի, իսկ իմ կարծիքով կապտած էլ պիտի լինի:

ՄԱՐԻԱ

Բայց ո՞վ էր, չկարողացար ճանաչել, կամ հիմա տեսնես կճանաչե՞ս թէ չէ...

ԳԵՈՐԳ

Մի տեսակ միջաճատակ մարդ էր. չճանաչեցի ես, բայց երեսի գծագրութիւնը լաւ միտս էր գալի, իսկ երբ յետ գառաւ ու իւր այն քարացած բռունցքով փոխարէնը հասցրեց այս երեսիս ու փախաւ, շշմեցի, մինչև անգամ ես ինձ էլ մոռացայ: Հազիւ վերցրի շլապան ու խաւեարը և ինձ տուն գցեցի. թէ այսպէս և թէ այնպէս, տիկին, ինչպէս երևում է տանու գող է. տանու մարդ կլինի բոլոր ճանապարհներ ցոյց տվողը:

ՄԱՐԻԱ, Կառնաթեւով

Ուղիղ ես ասում, Գէորգ, ուղիղ, անշուշտ դորա մէջ տանու մարդի մատ կայ խառը: Ես հասկանում եմ. էգ իմ մարդի արած սատանայու թիւններն են. էգ բոլորը նորա ցանած սերմերն են, որ այդ մարդիկը հնձում են. թէ այսպէս և թէ այնպէս ես գիտեմ, ինչպէս կվարուեմ դորա փոխարէն. Գու նախաճաշից յետոյ կերթաս Պիերի մագազինը և կբերես մի մեծ չամազան—եւ վաղը պիտի հեռանամ այստեղից, պիտի գնամ արտասահման. Աննային էլ կասես նախաճաշից յետոյ գայ, պատրաստութիւնս տեսնի—հասկացա՞ր:

ԳԵՈՐԳ

Ինչպէս չէ տիկին: (Իւր ճայտաթ) Ապա ե՞ս, ես մնամ անտէր...

ՄԱՐԻԱ

Ինչո՞ւ, գու կմնաս պարոնիդ հետ: Ելեապաս բեր տեսնեմ:

ԳԵՈՐԳ

Աննային տուեցի, որ գնի ձեր շկափը, այնտեղ կլինի:

ՄԱՐԻԱ

Հա, գնամ մի տեսնեմ ինչ օրն է ընկել: Այ աւազակ:

ԳԵՈՐԳ

Տիկին, բարեհաճեցէք մնալ. նախաճաշը պատրաստ է:

ՄԱՐԻԱ, շնորհով

Լաւ, գալիս եմ. գու գնա բայդուշ պարոնիդ կանչիր: (Գնում է):

ԳԵՈՐԳ

Այս րոպէիս: (Գնում է: Լավում է կուլեի ետեւից Գէորգի յայնը) » Նախաճաշը պատրաստ է »: (Յետոյ Միխայիլ Նգոբելի յայնը) » Գնա, գալիս եմ »: (Ներս է հանում Գէորգը):

ԳԵՈՐԳ

Թրխկոցը հիմա պիտի գուրս գայ: Տեսնենք ինչպէս կվերջանայ. կամ հէնց էստեղ պիտի բռնուեմ, կամ թէ չէ...

ՏԵՍԻԼ 12.

ՄԻՒՍԻԼ ԵԳՈՐԻՉ ԳԵՈՐԳ ԵՒ ՅԵՏՈՅ ՄԱՐԻԱ

ԳՐԻԳՈՐ ԱՐԲՍՄԻՉ, ՆԵՐՍ Ե ԿՐԻՍՏՈՍ ՅԵՐԵՍ
ԳԷ ՀԱՄԵՅԷՔ, ՂԷ ՀԱՄԵՅԷՔ ՎԱՐ ԵԿԷՔ ՄԻ

անխիղճ կնկայ թուլթակի տակ... Համեցէք նախածաշ արէք տան նախասենեակում... Յանկարծ տուզերից մէկը ներս մտնի, ի՞նչ կասի... չէ որ կ'իջի ու առանց պատճառ իմանալու յետ կը առնայ: Իէ արի մի բարկացիր, արի զսպի քեզ... Ինչպէս երևում է սորա հերանց տանը հէնց միշտ նախասենեակում են հաց ուտում... Չէ, կլուեմ, տեսնեմ բանը որտեղ է գաղարում (Գէորգին) Գնա տիկինիդ էլ կանչիր է, ի՞նչ ես գումշի պէս մխուսել էգտեղ:

ԳԵՈՐԳ

Նորա հիմա կգան: Ես նոցա յայտնել եմ: ՄԱՐԻԱ, Ներս է ճարհում: Երկնայանց ալտերը շատ վաղ հանրիպում են իրար:

Ուրեմն, պարոն, այսուհետև նախասենեակում պիտի հաց ուտեցնէք:

ԳԵՈՐԳ, առանցին

Վայ, վայ, ինչ վատ սկսեցին... (Գորս է ֆնոս):

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, առանցին

Իէ համեցէք... ի՞նչ է ասում... իր արածը ինձ վերայ է գցում, որ անպատճառ մի վէճ, կտիւ ընկնի... ինչպէս երևում է նա էլ այստեղ է... (Գնում է խորտի դռնը բաց է անում և նայում ալ և յախ, յետ ֆալով) Չէ, մարդ չկայ... Հա, ինչ ասացիք տիկին...
ՄԱՐԻԱ

Ի՞նչ պիտի ասեմ, մի թէ գուր ձեր արածը չգիտէք...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ
... իմ արածը, իմ արածը ասում էք տիկին, յետոյ չէք ամաչում... դեռ ևս չէք պատկառում...
... մի ազգայաց գլխովս ցոյց տալու

ՄԱՐԻԱ, Բարձր

Ես պիտի պատկառեմ, ամաչեմ... ամեն խայտառակութիւն ինձ ճաքացնելու համար արեցիր, ամեն օր շարմանկա ածող բերել ասեցիր, ածել տուեցիր (այս բարձր խօսքերից յետոյ ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉը լափառանց զարմայտան յետ ընդունում): Մածկովիս ու շլեպաս գողանալ տուեցիր, չեմ իմանում թէ ինչ օյիններ գլուխս հանեցիր ու հիմայ բերել ես ինձ ու այստեղ ես նախածաշ անել տալիս... բաւական է, ամօթ է... մի անօգնական կնօջ հետ այդպէս չեն վարուիլ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Իէ հիմա ի՞նչ էք ասում սորան, դէ արի ու հոգի հաւատ բեր գիմանայ, սօ սօ... (Գնում է նորէն դռնը բաց է անում, որ իմանայ արդեօտ անայայ լինան էկաթ է Ռէ շէ և նորէն վերադարձում է):
ՄԱՐԻԱ

Ի՞նչ էք շուտ շուտ գուրս նայում, կամենում էք վիճի կանչել... կաչեցէք, կանչեցէք որքան կամենաք, արգարութիւնը իմ ետեւիցս է:
ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, Բարկացած
... է՛հ, էս էլ նոր խայտառակութիւն... Ի՞նչ էք ասում տիկին, այդ ընչեր էք ասում, տիկին.

բաւական չեն ձեր արածները ու հիմայ նորէն
ուզում էք ինձ բորբոքել. մի փոքր գոնէ խնա-
յեցէք, անգուժ... (առանջին, Բարիացած) Ուզի՞ր է
ասած, որ կանայք քարասիրտ են...

ՄԱՐԻԱ

Սպասեցէք. ասացէք խնդրեմ իմ արածներս.
Թուեցէք գոնէ մի երկուսը... էլ ի՞նչ էք փայ-
տի նման կանգնել:

ՄԻԽԱԵԼ ԵԳՈՐԻՉԸ, Տի Կողմ

ԸՆՏՐ... էս էլ քեզ նոր անպատուութիւն (տո-
րան) Այ անխիղճ, քո արածները ինձ վերայ ես
կօտորո՞ւմ: Ինքզ ամեն օր շարման շնչիկին կան-
չում ես ու ինձ վերայ ես ձգում (ամէն խօսքից
յետոյ Մարիան արմատական յի է ընդունում) Ինքզ
խալաթս ու պալտօս գողանալ ես տալիս, ու
հիմայ ինձ վերայ ես ձգում: Դու ինքզ ծածուկ
մարդիկ ես այտեղ ման ածել տալիս, որ դա-
տաստանում քեզ վկայ կանգնեն ու հիմա ինձ
վերայ ես ձգում... Այսօր էլ ինքզ հրամայել
ես խեղճ ծառայի, որ անպատճառ այտեղ լի-
նի նախաճաշը ու հիմա անամօթաբար ինձ վե-
րայ ես ձգում... Թո՛ւհ, ես քեզ պէս կնոջն ինչ
ասեմ...

ՄԱՐԻԱ, վերջին աստիճանի Բարիացած

Թքիր քու հօրն ու մօր ու քու կօս պա-
պերի ու ազգու տակի վերայ, պարօն: Իսկ ե-
թէ կամենում ես, որ պարզն իմանաս, ծառան
այտեղ է. կանչենք ու հարցնենք...

ՄԻԽԱԵԼ ԵԳՈՐԻՉ, Կողմ
Կանչենք և ով որ մեղաւոր լինի... Գէ-
որգ...

ՄԱՐԻԱ

Գէորգ...
ԳԵՈՐԳ, Կերպ Գալ
Հրամայեցէք, (առանջին) Ա՛յ, այ, տունս քան-
դուկ...

ՄԱՐԻԱ

Գէորգ, պարզն ասա...
ՄԻԽԱԵԼ ԵԳՈՐԻՉ, Դեղ ընկնելով
Սպասիր ես հարցնեմ, դու մի խօսա...

ՄԱՐԻԱ

Չէ, ես կհարցնեմ, ուզում ես որ... չէ, ես
պիտի հարցնեմ:

ՄԻԽԱԵԼ ԵԳՈՐԻՉ

Լաւ, լաւ, դու հարցրու: Գէորգ, ուզի՞ր
ասա, որ ուզի՞ր ասես՝ լաւ փող կբաշխեմ, մի
վախեցիր:

ՄԱՐԻԱ

Ե հիմա փողի անուն տուեցիր, ի հակէ նա
ինձ վերայ կգցի...

ՄԻԽԱԵԼ ԵԳՈՐԻՉ

Նզոված լինեմ թէ ես այն մտքով փողի ա-
նուն տվեցի, որ քեզ վերայ գցի... Գէորգ, յա-
նուն Աստուծոյ...

ՄԱՐԻԱ

Լաւ, լաւ, ասա տեսնեմ Գէորգ, քեզ ո՞վ

հրամայեց որ նախաճաշը այստեղ պատրաստես. ասա՛, պարզն ասա... (նա բան չէ ասում): Թէ ես եմ ասել՝ ասա, թէ սա է ասել՝ ասա:

ԳԵՈՐԳ

Է՛ է... պարոն ու տիկին ի՞նչ բանի ետե- ից էք ընկնում: Կերակուրը սառեց, գնամ բե- րեմ... (նա չի մտադրում):

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ձէ, սպասիր, մի գնալ. ուղիղն ասա. որ ու- ղիղն ասես, ես քեզ մինչև մահդ իմ տանը կը- պահեմ, ասա՛ պարզը:

ՄԱՐԻԱ

Է՛լի կաշառք:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Կաշառքս որն է, ես այդպէս գոնէ պիտի ասեմ, որ ուղիղն իմանանք, թէ չէ:

ՄԱՐԻԱ

Էլ ինչ ես կանգնել Գէորգ. ասա՛, պարզն ասա էլի. քո վիզը խօմ չենք կտրելու. ես եմ հրամայել թէ նա:

ԳԵՈՐԳ

Դէ տիկին, շատ էք դուք էլ բանի ետե- ից ընկնում: Կամ նորա են ասել, կամ դուք էք ասել:

(Այդ միջոցին, երբ ասաց, «կամ նա է ասել» Մարիան ասում է Միխայիլ Եգորիչին, «Այ՛, իսկ երբ Միխայիլ Եգորիչը լսում է «կամ դուք էք ասել» ասում է Մարիային, «Այ՛»):

ՄԱՐԻԱ

Ձէ, դորանից բան դուրս չեկաւ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Այ մարդ մի պարզն ասա, թէ չէ...

ԳԵՈՐԳ, ի՛նչ Բարկայած

Թէ որ այդպէս է, ես եմ արել. պարծանք...

ՄԱՐԻԱ

Տօ, ուղիղն ասա... մեղայ քեզ տէր Աստու- ած...

ԳԵՈՐԳ

Կերակուրը սառեց... գնամ բերեմ (Գ... է գնում):

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ձէ, չի ասում. սորանից բան չի կարելի ի- մանալ. բայց թէ այսպէս և թէ այնպէս՝ ես մի չնչին կնոջ խօսքի տակ չեմ մնալ. ես իմ գի- տեցածս կանեմ...

ՄԱՐԻԱ

Ես էլ իմ գիտեցածս կանեմ, տեսնենք ու՛ր կիողմանի:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Նատ բարի, տեսնենք:

(Երկուքն էլ շատ բարկացած նստում են նախաճաշ անելու. մէկը նստում է սեղանի այս կողմը, մէկը այն: Միխայիլ Եգորիչը, կա- մենալով չտեսնել իւր ամուսնոյ երեսը, զինու շիշը մօտ է դնում իւրեան և լրագրի կէտը պառկեցնելով սեղանի վերայ, իսկ միւս կե- սը կանգնեցնելով, ի հարկէ զէմ պուած շիշն, սկսում է ուտել և կտրալ և այսպիսով լրագիրը պատճառ է լինում Միխայիլ Եգորիչին չտեսնելու կնօջ երեսը: Այս նկատում է և հասկանում է Մարիան. նա էլ դորա փոխարէն գիտութեամբ վերցնում է զինու շիշը, զինի ածելով իւր բաժակի մէջ, խմում է: Ի հարկէ, երբ նա շիշը վերցը- նում է, լրագրի մի մասն էլ է վայր ընկնում սեղանի վերայ. Միխայիլ Եգորիչը շատ վատ նայում է Մարիայի երեսին և վերցնում է ջրի

շիշու ու լրագիրը նորէն դէմ տալիս: Մի փոքր յետոյ Մարիան դարձեալ վերցնում է ջրի շիշը և ածում է իւր բաժակը ջուր—լրագրի մասը վայր է ընկնում սեղանի վերայ: Միխայիլ եզոբիչը առաւել ևս բարկացած նայում է կնօջ երեսին և կրկնում է իւր արածը մօտեցնելով քացախի, խարդալի, բիբարի սլ ր ի բ ո ռ ը: Մարիան նոյնպէս վերցնում է մի փոքր յետոյ այդ քրիճօրն-ը և քացախ է ածում իւր աճանը: Լրագիրը վայր է ընկնում: Այստեղ երկոցունց աչքերը շատ վատ և բաւականին երկար ժամանակ հանդիպում են իրար: Միխայիլ եզոբիչը այլ ևս ուրիշ բան չգտնելով ակամայից ստիպված պարտաւորվում է ձախ ձեռով բռնել լրագիրը և աջ ձեռով ուտել: Անցնում է միջոց: Մարիան վեր է կենում տեղից, գնում է իւր սենեակը և իսկոյն վերադառնում է, բերելով մի այլ լրագրի համար, և մօտեցնելով ջրի շիշը իւրեան, անում է այնպէս, ինչպէս մի փոքր առաջ իւր ամուսինն արաւ, ի հարկէ կամենալով ցոյց տալ, որ նա էլ նորա երեսը չի կամենում տեսնել: Այդ նկատում է Միխայիլ եզոբիչը, վերցնում է ջրի շիշը և ջուր է ածում: Մարիան մօտեցնում է գինու շիշը—այդէլէ վերցնում Միխայիլ եզոբիչը և գինի է ածում: Տիկինը մօտեցնում իւրեան պրիբորը նոյն նպատակի համար, բայց մի փոքրից յետոյ այդ էլ է վերցնում: Այս միջոցին նորէն երկոցունց բարկութեամբ վառուած աչքերը բաւականին ժամանակ հաղիպում են իրար: Մարիան իսկոյն վեր է կենում տեղից, կիսատ թողնելով նախաճաշը և վայր գցելով տակի աթոռը, շտապաւ գնում է իւր սենեակը: Միխայիլ եզոբիչն էլ է վեր կենում, և գնում է բարկացած:

ՎԱՐԱԿՈՅՐԵ ԻՋՆՈՒՄ Է:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՍ.

ՆՈՏԵ ՏԵՍԱՐԱՆԸ ԱՌԱՏԵ ՀԱՅԻ ՍԵՂԱՆԻ

ՏԵՍԻԼ Է.

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, ներս վաղելով է-ր դ-նից

Նոր լուսամուտից տեսայ, որ մի ինչ մարդայս պատի տակ գնում գալիս է. հըմ... Երեւի դա Մարիայի սովորեցրած մարդերիցն է, որը նորա համար վկայի դեր պէտք է խաղայ... Ըհը, եկա՛ւ... (ման գալով) փայտս ուր է, փայտս... ահա (գործում է և գնում է խորտի դռան յախ հողմում հանգնում, յետին պինդ բռնած փայտը և տին մի վայրկեան ուղտելով թէ ներս պինդ գայ անյայտ վիճակ) Մարդ չկայ, սխալուեցի... Հա, այսպէս պիտի անել (դռուը համայ ծածկում է և սըռում է գորգուալ մէջ է-ր, մէջ Մարիայի յայնով) Այո, այս բոլորը քո արածն է, դու ես ինձ հետ այդպէս վարվում... (հանայի յայնով) Ձէ, ասա տեսնեմ, ո՞վ է շարմանկա ածողին ամեն օր կանչում... (է-ր յայնով) Ես եմ կանչողը, թէ դու (հանայի յայնով) Ո՞վ է ծածկովիս ու շրեապաս գողանալ տվողը: (Ի-ր յայնով) Իսկ իմ խալաթն ու պալտօն ո՞վ է գողանալ տալիս, տիկին: (Կանայի յայնով) Ո՞վ է ամեն անգամ ինձ զզուեցնում: (Ի-ր յայնով) Իէ, դէ, գլուխս մի տար, ասում

եմ, թէ չէ, ինչ որ չես տեսել այն էլ կտեսնես։
 (Կանայի յայնով) Լուր... (Իւր յայնով) Ախ դու
 անպիտան, դ՞ու համարձակուես... (Իբրև է
 պարերին) այ քեզ, այ քեզ (Կանայի յայ) այ այ այ,
 հասէք, օգնեցէք։ (Իւր յայ) ձայնդ կտրիր (չա-
 րանակում է իբէլ այս և այն կողմ) Աստուած սիրո-
 ղը հասնի, Գէորգ, Աննա... (Այս միջոցին մասնա-
 ներս է մտնում Գրիգոր Աբրահայի և Միխայիլ Եփրեյի
 շատուած իւր բարկութեամբ, հասնում է սարսն մի,
 երկու...) հազիւ եկանք, այ քեզ, այ քեզ... դէ
 գնա, այս էլ վկայիր...

Տ Ե Մ Ի Լ 2.

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ ԵՒ ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ, սարսնալով հարսածը

Միխայիլ եգորիչ, ես եմ, կամաց է... ու՛ֆ...
 ու՛ֆ... ի՛նչ վկայութիւն... ախար ի՛նչ եմ ա-
 րել (ներս է մտնում Գէորգը)։

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ախ, Գրիգոր Աբրամիչ, (Գրիգոր և փայտ շայր
 փչելով) ախ, Գրիգոր Աբրամիչ, ներողութիւն,
 եղբայր. այնքան բարկացած էի, որ չիմացայ թէ
 ում հետ գործ ունէի։ Գրիգոր Աբրամիչ, ներո-
 ղութիւն, Գրիգոր Աբրամիչ...

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ, մէջը բռնելով

Ու՛ֆ, ու՛ֆ, մէջկս ջարդեցիր, նոր ներողու-
 թի՛ւն... օյ օյ օյ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Գրիգոր Աբրամիչ, հոգիս, չնկատեցի որ դու
 ես հաւատացիր...

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ, մէջը բռնելով

Օրհնած, խըռւմ էիր մի փոքր կամաց գոնէ
 խբէիր... չէիր իմանում որ ես եմ։

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Այդ է որ չէի իմանում է, իմանայի այդ-
 պէս կանէի...

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ

Ես որ ներս մտայ ախր մարդ չկար, ում
 էիր այնքան ծեծում...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Էլ ինչ ասեմ եղբայր, կիսս ինձ այս տեղն
 է հասցրել։

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ

Ի՛նչպէս...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Էլ ի՛նչն ինչպէս, ինչ որ ձեռից գալիս է
 խնայում է գոնէ...

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ

Ես բան չեմ հասկանում։

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Եղբայր, ամենայն օր շարմանկա ածող է
 կանչում ու մեր այս լուսամուտի տակ ածել ու
 երգել տալիս, պալտօս ու խալաթս է գողանալ
 տալիս...

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻԶ

Այդպէս բան ինչպէս կարող է լինիլ՝ Մի-
խայիլ եգորիչ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Հաւատացնում եմ քեզ. այ, մեր Գէորգին
չեն ծեծել, երբ նա գողացողին Պօլիցիա է կա-
մեցել տանել... Յետոյ. երբ ես տեսել որ նա-
խաճաշը նախասենեակում անեն, երբ ես տե-
սել—այս էլ նորա հրամանն է... միւսը, եր-
րորդը, ո՞ր մէկն ասեմ...

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻԶ

Բայց...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Միայն ես քեզ խնդրում եմ. դու իրան
խորհուրդ տուր, որ այդ տեսակ բաներից ձեռք
քաշի, ապա թէ ոչ՝ ես ինչ որ ունեմ կվերցը-
նեմ, կերթամ արտասահման և իմացած կաց որ
ես արդէն վճռել եմ այդպէս անել, եթէ միայն
վերջ չտայ իւր այսպիսի վարմունքներին ու այ-
նուհետեւ զղջայ էլ՝ վերադառնողը չեմ:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻԶ, առանցիկ

Ըհը... սա էլ արտասահման, աչքս լոյս...

ԳԵՈՐԳ, ԳՆԱԼՈՎ, ՔԻՂՆԵ

Վայ, վայ, սա էլ արտասահման... բանս
թարսուեց... Հիմա ուրիշ հնարք է հարկաւոր...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Որ մեռնի էլ՝ չեմ վերադառնալ այնուհե-
տեւ. այդպէս.—իմ վճռիս այդ է:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻԶ, առանցիկ

Արտասահմանը լաւ մարդ ու կնկայ փախ-
չելու տեղ է դառնել:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Այդպէս... խելք ունի թող դադարի, բա-
ւական է. խնդրում եմ քեզանից, իրան ասա,
հասկացրու բանի էութիւնը, կակղացրու նո-
րան, ամաչացրու. իբրև եղբայր՝ ես քեզ յանձ-
նում եմ...

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻԶ, առանցիկ

Աչքս լոյս... Նա ինչ է ինձ առաջարկում,
սա ինչ է առաջարկում: Հիմա էս քոթակը ինձ
արժէր, թէ չէ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Հասկացար, Գրիգոր Աբրամիչ... խնդրում
եմ, ասա որ ինձ էն տեղը չգցի...

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻԶ

Շատ լաւ, աչքիս վերայ. բայց դու ինձ մի
ասա տեսնեմ, այն ծեծը ինչ կնշանակէր:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ինչը...

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻԶ

Քոթակը, քոթակը... ինչքան խելքիս զոր
եմ տալիս, ոչինչ չեմ հասկանում:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Կասեմ, բոլորը կասեմ, միայն դու հէնց
հիմայ գնա, նորա հետ խօսիր. ես քեզ բոլորը
կպատմեմ: Ինձ հէնց հիմա հաշտութեան լուր
բեր. ես սպասում եմ: (Գնում է):

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ, Ռիայն

Այլ քեզ օյին... Գա չլինի՞ իմացել է որ ես
իւր կնոջ հետ ծածուկ գործեր ունեմ ու գո-
րա համար... Չէ, երբ ես մտայ՝ նա հէնց ծե-
ծում էր մէկին, բայց չեմ հասկանում թէ
ու՞մ: Թէ այսպէս և թէ այնպէս ինձ կպատմի,
իսկ ես հիմա գնամ տիկին Մարիայի մօտ և
յայտնեմ իմ վերջնական կամքս: (Կամենում է գը-
նալ Բայց Մարիան հաճո՞ւմ է շօտանալ գլխին, զո՞ւ-
նիկ յետին, դուրս է հանում):

ՏԵՍԻՆ 3.

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ ԵՒ ՄԱՐԻԱ

ՄԱՐԻԱ, հնարաբար նախապէս

Ախ, Գրիշա ջան, ի՞նչ եղար, ես քեզ մե-
ռայ սպասելով. հէնց հիմա գալիս էի քեզ մօտ,
որ իմանամ քո միտքը... Արդէն համաձայնած
պիտի լինես, չէ՞:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ

Յաւօք սրտի կամենում եմ ձեզ յայտնել,
տիկին, որ չեմ կարող:

ՄԱՐԻԱ, չարաբան

Ի՞նչպէս:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ

Այնպէս որ տիկին, շատ դժուար առաջար-
կութիւն է դա. ասլա իմ գործերս ինչ անեմ:

ՄԱՐԻԱ, հարաւարտ

Այդ քեզանից ես չէի սպասում...:

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ

Ես այդ հասկանում եմ, տիկին, բայց իմ
դրութիւնը... այսինքն... ես (առանջին) ինչպէս
ասեմ որ լաւ լինի... (նորան) Բայց...
ՄԱՐԻԱ, նկարագր
Բաւական են ձեր բայցերը... դուք իմ վի-
զս ծռեցիք, ես ձեզ վերայ մեծ յոյսեր ունէի...
դուք ինձ ամեն կերպ խաբեցիք... դուք ինձ
հետ վարվեցիք ինչպէս մի շարլատան...

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ

Ես մեղաւոր եմ տիկին, բայց... պիտի մի
փոքր դուք էլ հասկանաք իմ գրութիւնը...

ՄԱՐԻԱ

Բայց, իմ դրութիւնը... բայց... իմ դրու-
թիւնը... ահա ձեր անկապ նախագասութիւն
կազմող բառերը... Այսօրէն իսկ ես հեռանում
եմ ձեզանից... ուրեմն մնաք բարեալ... ես
միայն կարող եմ գնալ արտասահման... (հիւստի
է դէպի է-ր դուրս):

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ

Տիկին, սպասեցէք, մի երկու խօսք ևս...

ՄԱՐԻԱ, կոպտաբար է-ր դուրս

Ի՞նչ է, ի՞նչ էք կամենում ասել... փոշմա-
նեցիք, կամենում էք ինձ հետեւել...

ԳՐԻԳՈՐ ԱՔՐԱՄԻՉ

Ոչ, տիկին... այսինքն... բայց...

ՄԱՐԻԱ

Գարձեա՛լ բայց... մնա՛ր բարով... (Բարեւոյցս հողորմ է իւր երեւից Կոտայքի անյայտանմ է):

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻԶ, յեաները արարելով

Ձէ, լաւ վերջացաւ... կարփեց մեր բարեկամութիւնը... և շատ լաւ եղաւ. այլ ևս ինձ ի՛նչ հարկաւորութիւնս, երբ այստեղ մնալու չէ՛... հը՛... հա՛... ուրեմն ԻՅ ԱՅՅՈՒ ԿՐՅՈՄԵ, ՄԱՐՄԵ!.. (Քննում է շրապան. անցնում է մեծոք մեծաց, ներս է մտնում Միխայիլ Եփրեմէլ):

ՏԵՍԻԼ 4

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ ՅԵՏՈՅ ԳԵՈՐԳ

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ, իայն

Գրիգոր Աբրամիչը այստեղ չէ... Մի գուցէ դեռ ևս Մարիայի սենեակումն է... Նա շատ կաշխատի հաշտեցնելու համար, գիտեմ... բայց միթէ մինչև այժմ չեն վերջացրել իւրեանց խօսակցութիւնը... հը՛... (Կանչում է Ժապետին) Գէորգ...

ԳԵՈՐԳ, ներս մտնելով

Հրամայեցէք...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Գրիգոր Աբրամիչը տիկնոջը մօտն է՞...

ԳԵՈՐԳ

Ո՛չ... պարոն, նոցա մօտ մարդ չկայ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ապա ո՛ւր է նա...

ԳԵՈՐԳ

Նորա բաւականին միջոց է որ գնացել են:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ի՛նչպէս թէ գնացել... նա ինձ պիտի պատասխան բերէր... Հա՛... տիկնոջը հետ տեսնուեցա՛նք...

ԳԵՈՐԳ

Այո՛:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ինչքան վերայ էին խօսում: Հասկացա՛ր թէ չէ՛... ար մե՛յն ցո բնագո... չէ՛...

ԳԵՈՐԳ

Ոչ, պարոն. ես իմ սենեակումն էի, բայց մի փոքր բարկացած իրար հետ խօսացին խօսացին և հեռացան:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Մի երկու խօսք գոնէ չհասկացա՛ր:

ԳԵՈՐԳ

Բողորովին... ես միթէ իրաւունք ունեմ նոցա խօսակցութիւնը շտելու:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Լաւ. ես հասկացայ... (առանցին) Ինչպէս երևում է Գրիգոր Աբրամիչը շատ է համոզել, բայց բան գլուխ չի եկել և շատ բարկանալուց յետոյ՝ թողել և, այլ ևս չկամենալով ինձ վրէտացնել, գնացել է... Ահա ինչ կնշանակի մա-

քուր սիրտ ունեցող բարեկամ և ուղիղ որ բարի կամեցող է նա ինձ... ուղիղ որ սերտ սէր և մաքուր սիրտ ունի նա դէպի ինձ... խեղճ մարդ... Խնչ արած... մի չար կնոջից ստիպուած պարտաւորուած եմ հեռանալ և նորանից... (Կաթնած է և ման գալիս) Հա... Գէորգ, այս ընդհանր կգնաս Պիերի մագաղինը և մի ամուր և մեծ չամադան կբերես ինձ համար, հասկացար... ես վաղը գնում եմ արտասահման... X

ԳԵՈՐԳ, Խեղճ Խեղճ

Պարոն ապա է՞ս... է՞ս ինչ անեմ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, Կաթնած Կաթնած

Է՛հ... քեզ ինչ... որտեղ որ լինի դու քեզ համար կապրես... կամ տիկնոջը մօտ կմնաս...

ԳԵՈՐԳ

Ինչպէս կբարեհաճէք, պարոն... (առանջին) Չէ, պիտի սրանց հաշտեցնել, թէ չէ տունս կքանդուի (Կաթնած է գալիս)...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Հա... տիկինդ որտեղ է...

ԳԵՈՐԳ

Իւրեանց սենեակում պառկած են, պարոն...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Պառկած... ինչո՞ւ է պառկած...

ԳԵՈՐԳ

Շատ վատ տկարացաւ նոր, պարոն: Աննան շուտ շուտ ջուր է տալիս երեսով... սիրտը գնում է, պարոն...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ինչպէս թէ... ախար նոր առողջ էր...

ԳԵՈՐԳ

Գրիգոր Աբրամիչը հէնց գնաց թէ չէ՛ նոքա այս օրն ընկան, պարոն...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Նա գիտէ՞ որ ես արտասահման եմ գնում:

ԳԵՈՐԳ

Նոցա խօսքերից երևաց որ գիտեն:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ի՞նչ խօսքեր... Խնչ ասաց...

ԳԵՈՐԳ

Է՛հ... ինչ և իցէ, պարոն...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ասա, ասա մի թագցնիլ:

ԳԵՈՐԳ

Ասացին. նա գնում է արտասահման, ինձ թողնում է, ասացին...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Յետո՞յ:

ԳԵՈՐԳ

Յետոյ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ասա:

ԳԵՈՐԳ

Մի խօսքով Գրիգոր Աբրամիչը գնալուց յետոյ շատ փոխուեցին...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Այ ինչ կնշանակի ընկեր, սրտակից ընկեր... Մէկէլ պատահեմ նորան՝ ճակատից պիտի համբուրեմ Աստուած վկայ... երևի շատ պինդից է բռնեցրել... բայց չի կարողացել համոզեցնել... Հա... յետոյ...

ԳԷՈՐԳ

Յետոյ էլ ասացին... բայց չէ ոչինչ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ասա, ասա, վերջապէս հրամայում եմ...

ԳԷՈՐԳ

Տիկնոջ աղանջը կնկնի, պարոն... ոչինչ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ոչինչ չի ընկնիլ, միամիտ կաց, ասա:

ԳԷՈՐԳ

Միայն, պարոն, խնդրեմ, ի սէր Աստուծոյ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ասա, ես քեզ ասում եմ մի վախենալ, միամիտ կաց, գեռ ևս կպարզեալորեմ քեզ...

ԳԷՈՐԳ

Ասացին, որ նա ինձ կամենում է թողնել ես որտեղից գտնեմ նորանից լաւ մարդ, ասացին...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Յետոյ:

ԳԷՈՐԳ

Յետոյ էլ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ասա, ինչ ես վախենում, ուղիղն ասա՛ ես քեզ չեմ մոռանալ:

ԳԷՈՐԳ

Տիկնոջ աղանջը կնկնի, պարոն, յետոյ մի կտոր հացից էլ կզրկուեմ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Օ՛հ, ինչ անասունն է... ես քեզ ասում եմ մի վախենալ ես քեզ մինչև մահդ ինձ մօտ կը պահեմ, միամիտ կաց:

ԳԷՈՐԳ

Մէկէլ այս ասացին որ՝ կերթամ, ասացին, և կմտնեմ կուսանաց վանքը, եթէ նա թողնի և հեռանայ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ, Բարեբախտ Կալաթ

Այ իմ հրեշտակ Մարիա ջան, իմ կեանքի սիւն Մարիա ջան, ես... ես քեզ այլ ևս չեմ թողնիլ... ես յաւիտեան մոռացայ... (Երասնո՛ւ է) ես լաւ գիտեմ որ իմ կինը վատ չէ, բայց թէ ինչ սառանայ էր մտել նորա սիրտը այս քանի օրուայ մէջ — չգիտեմ... Գէորգ, էլ չգնաս Պիերի մագաղինը, Պիերի հայրն եմ անիծել, էլ հարկաւոր չէ չամագանը... ես մնացի... ես մնացի (գնալով դէպք իւր «Ենեալը») իմ նազելի Մարիա մօտ (դասնում է դէպք իւր «Ենեալը» արտաքին համբոյր է ուղարկում նորան և ճարտարում է իւր «Ենեալը»):

ՏԵՍԻԼ 5.

ԳԵՈՐԳ, Դայն

Էս շատ լաւ եղաւ... այ թէ տիկինիս էլ այսպէս կակղացրեցի հա՛... Տօ նա էլ կ'կակղի, տօ էրա հայրն ու մայրն էլ կ'կակղեն, տօ դեռ նրա պապ ու տատն էլ պար կգան իմ թուխակի տակ... այհօ՛ւն...

ՏԵՍԻԼ 6.

ԳԵՈՐԳ ԵՒ ՄԱՐԻԱ

ՄԱՐԻԱ, Զէրն է մարտի 20-ը կէպա՛ծ շր՛, չամադանս բերեցիր...
ԳԵՈՐԳ

Ո՛չ դեռ, տիկին. հիմա գնում եմ. հազիւ թէ գործից թեթեւացայ. (առանջին) շատ մի կըտոր կտոր գալ—կ'կակղես:

ՄԱՐԻԱ
Ա՛խ, ինչպէս դու անտանելի ես ինձ. Ի՞նչնչո՛ւ չես կատարում այն, ինչ որ քեզ հրամայեա՛ծ է:

ԳԵՈՐԳ
Ներողութիւն տիկին: (Առանջին) Ինչ օձի կծածն է՛:

ՄԱՐԻԱ
Ուրեմն թող գործը և գնա շուտով Պիեռի մօտ, առանց ուշացնելու (մի լաւ չամադանս բեր, հասկացար. — չամադանը մեծ լինի:

ԳԵՈՐԳ

Այո, րօպէիս տիկին, պարոնին ջուր հասցընեմ և գամ:

ՄԱՐԻԱ, շրտապա՛ս և հաւաքա՛ւ:

Ինչո՞ւ համարէ ջուրը... խմելո՞ւ...

ԳԵՈՐԳ

Ոչ, տիկին, ուշքը գնում է. Աննան մօտին է, քաթան է ջրով թացանում և գնում գլխին:

ՄԱՐԻԱ

Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել...

ԳԵՈՐԳ

Զգիտեմ, տիկին. բայց նախաճաշից յետոյ շատ փոխուեց պարոնի առողջութիւնը:

ՄԱՐԻԱ

Ինչո՞ւ, ինչո՞ւ, իմացաւ իմ արտասահման գնալը՞:

ԳԵՈՐԳ

Այո, տիկին... թէ ասեմ...

ՄԱՐԻԱ

Ասա, ասա շուտով:

ԳԵՈՐԳ, կամայ

Թէ ասեմ ձեր գնալն էր իսկ պատճառը:

ՄԱՐԻԱ

Ի՞նչ է, բան—ման իմացար:

ԳԵՈՐԳ

Այո, տիկին... բայց չէ, չէ, ոչինչ չիմացայ:

ՄԱՐԻԱ

Ի՞նչ ես ծածկում, ասա, մի վախենալ:

ԳԵՈՐԳ

Այսինքն... նոցա մի քանի խօսքերից երե-
ւաց, որ շատ են փոշմանել ձեզ հետ այնպէս
վարվելու համար... մէկ էլ ասացին...

ՄԱՐԻԱ

Ի՞նչ ասաց, ասա շուտով. ի՞նչ ես կանգ-
նում... մի վախենալ, ես քեզ կվարձատրեմ և
քեզ խոստանում եմ, քանի որ կամ՝ քեզ այս
տանից չհեռացնեմ. ասա շուտով ուղիղը:

ԳԵՈՐԳ

Մէկէլ ասացին որ ափսոս իմ Մարիա... ես
հրատելից գտնեմ, ասացին, նորանից լաւը...

ՄԱՐԻԱ

Յետո՞յ...

ԳԵՈՐԳ

Այն սաստիկ տաքութեան մէջ՝ ամեն րոպէ
ձեր անուէն էին տալիս... Մի գնա... մի գնա...
ներսողութիւն, ասում էին շուտ շուտ:

ՄԱՐԻԱ, խղճալով

Ի՞նչ ես ասում... ուղի՞ր ես ասում... խեղճ
մարդ...

ԳԵՈՐԳ

Այո, տիկին, մի խօսք անգամ ինձնից չեմ
աւելացնում... այս էլ ասացին, տիկին, որ...
բայց չէ, բայց չէ, ոչինչ չասացին:

ՄԱՐԻԱ

Ասա, ասա, Գէորգ, մի վախենալ... ինչ որ
խոստացայ քեզ՝ կ'կատարեմ անշուշտ... ասա,
է՛լ ինչ ասաց:

ԳԵՈՐԳ

Տիկին, յանկարծ պարտի ահանջը կնկնի
ու... մի քանի քայլով դուրս ելաւ:

ՄԱՐԻԱ

Միամիտ կաց, խոստանում եմ, որ չի ըն-
կընիլ:

ԳԵՈՐԳ

Մէկէլ, ինչպէս երեւաց՝ մի քանի խօսքե-
րից՝ կամենում են ձեզանից յետոյ իւր բոլոր
կարողութիւնը տալ վաճառի և ինքեանք նորա
մէջ ճգնել. մինչև անգամ այս էլ ասացին, որ
ես, ասացին, վաճառի ժամհարութիւն էլ կա-
նեմ...

ՄԱՐԻԱ, խղճալով

Մի՞ թէ... խեղճ ամուսինս, խեղճ...

ԳԵՈՐԳ, կաշնալով գնալ

Տիկին, ներսողութիւն, ջուրը ուշացաւ. ջու-
րը հասցնեմ թէ չէ, իսկոյն կերթամ չամադանը
բերելու:

ՄԱՐԻԱ

Չէ, չէ, Գէորգ, այլ ևս հարկաւոր չէ. թող
օտտանան տանի չամադանը. այլ ևս ինձ չա-
մադան պէտք չէ. դու գնա ջուր հացրու պա-
րտնիդ: յայտնիր էլ, որ ես գնալու չեմ... թող
հանգստանայ:

ԳԵՈՐԳ, ասանքին, գնալով

Ինչպէս կ'կակղացնեմ, համ:

ՄԱՐԻԱ, Ռայն

Խեղճ մարդ, խեղճ... ես ի՞նչպէս անգուժ
պիտի լինեմ, որ թողնեմ սորան և գնամ...
(Կառնալով զեպի Միխայիլ Եփրեյի զոտը) Ձէ, հո-
գիս, այլ ևս չեմ գնալ. ես քեզ չեմ թողնիլ, որ
գնաս ժամհարուժիւն անես... ես բոլորովին
կմոռանամ, հոգիս... Գարձեալ դու կլինես ինձ
հարկաւոր, գարձեալ քո սիրտը կցաւի ինձ հա-
մար... Այլոց ի՞նչ փոյթ... Ես փորձեցի անպի-
տան Գրիգոր Աբրամիչին... նորա հետ միայն...
Թէ չէ նեղ օրում հասնող չէ... (Ձեռքը դնելով
սրբին) Ախ, ինչպէս սիրտս բաբախում է... Ար-
դեօք ինչպէս է ամուսինս... իմ Միքայելս...
(Կարծած է) Հը, չգնամ արդեօք տեսնելու նո-
րան... գնամ, գնամ նորան համբուրեմ, մի ա-
մուսնական պարզ և ջերմ համբոյրով—գուցէ
այս համբոյրը լինի նորա վերջի սպեղանին...
(Գնում է զեպի նորա զոտը, Բայց կանգնում է, կար-
ծում է և յետոյ կառնում է զեպի իւր զոտը և,
կանգնելով այնպէս, երեսը զեպի իւր զոտը զարձրած,
նայէն կարծած է):

ՏԵՍԻԼ 7.

ՄԱՐԻԱ ԵՒ ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

ՄԻԽԱԻԼ, ԵԳՈՐԻՉ, ներս գալով առանջին
Ձէ, սիրտս չէ համբերում, գնամ մի տես-
նեմ Մարիայիս. գնամ իմանամ նորա օրակիսու-

թիւնը. գուցէ Տէր մի արասցէ, Տէր մի արաս-
ցէ բժշկի կարօտութիւն կայ... Ախ, եթէ վատ
վերջաւորութիւն ունենայ նորա տկարութիւնը՝
եւ կցնորվեմ, Աստուած վկայ կցնորվեմ (Կառ-
նում է զեպի իւր ինչ զոտը և յանկարծ նկատում է,
նորան կանգնած և կարծածով յետ) Ախ, այս նա է,
իմ Մարիաս է...

ՄԱՐԻԱ, յետ կառնալով, առանջին

Ախ, ամուսինս... նա ինչպէս երևում է
իմացաւ, որ ես այլ ևս չեմ գնալու արտա-
սահման...

(Այստեղ երկուցոնց հայեացքը հանդիպում են իրար: Սոցա
այս հայեացքից թափում է սիրոյ կրակ, սիրոյ բորբոք. այս հայ-
եացքից երևում է որ ամենայն բան մոռացված է, կարծես թէ բո-
լորովին եղած չէ ոչինչ. կարծես հանդիպում եւ երկու մատաղ և
գեղեցիկ սիրահարների, որոնց քնքրյալ ջերմ սիրալիր հայեացքից,
թափում է սրբութիւն, մաքրութիւն և պարզ Աստուածահաճոյ սէր):

ՄԱՐԻԱ, քնքաբար

Ի՞նչպէս ես զգում քեզ, Միխայիլ ջան:

ՄԻԽԱԻԼ, ԵԳՈՐԻՉ, Կարնալով

Ոչինչ, լաւ եմ: դ՛ու ինչպէս ես զգում, ասա:

ՄԱՐԻԱ, նոյնպէս

Նոյնպէս լաւ եմ, ամուսինս... բայց դու
տկարացած չե՞ս...

ՄԻԽԱԻԼ, ԵԳՈՐԻՉ

Ձէ, Իսկ դ՛ու:

ՄԱՐԻԱ, պարտադրած

Նոյնպէս:

Վա... (առանջին) խեղճ... թագցնում է:

Տ Ե Ս Ի Լ 8.

ՆՈՅՆԵ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԱՐՐԱՄԻՉ

ԳՐԻԳՈՐ ԱՐՐԱՄԻՉ, առանջին

Գնում է գնա, թէկուզ ջհանգամը գնա. բայց դորանից առաջ մի լաւ Միխայիլ Եգորիչի տակը լցնեմ իմ միտքս ուրիշ է: Այս էլ անեմ ու մնաք բարև (համէնս է գնալ Միխայիլ Եգորիչի սենեակը՝ բայց յանկարծ նկատում է նոյա միտին կոնֆուսիւս և քաղցր հայեացի և խօսակցութեան մէջ):

ՄԱՐԻԱ, անշուքայ

Ուրեմն դու բողոքողին առնող ես... ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Այո, առողջ եմ, բայց մի փոքր գլուխս ցաւաց:

ՄԱՐԻԱ, առանջին

Թագցնում է... ինձնից տկարութիւնը: (Գրիգոր Արամիչը կամենում է մտնել Միխայիլ Եգորիչի սենեակը, բայց նկատում է նորան Մարիան):

ՄԱՐԻԱ, Գրիգոր Արամիչին

Ախ, դուք կրկին այստեղ, պարոն... առաջարկում եմ ձեզ այս րոպէիս դուրս գնալ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ախ, Գրիգոր Արամիչ... սխալվում ես Մարիա ջան, սա մեր սիրելի Գրիգոր Արամիչ-

չըն է. դու մի գուցէ ուրիշի տեղ ես ընդունում:

ԳՐԻԳՈՐ ԱՐՐԱՄԻՉ

Տիկին, ես... բայց... այսինքն...

ՄԱՐԻԱ

Ես շատ լաւ գիտեմ, հոգիս սորա ուլ լինելը. հէնց այդ է պատճառը, որ առաջարկում եմ սորան դուրս գնալ:

ԳՐԻԳՈՐ ԱՐՐԱՄԻՉ

Ներողութիւն տիկին, ես... բայց...

ՄԱՐԻԱ

Կրկին ձեր բայցերը... ինչպէս երևում է դուք չէք կամենում գնալ... համեցէք դուրս...

ԳՐԻԳՈՐ ԱՐՐԱՄԻՉ

Հնազանդում եմ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, հուլիս

Բայց ես բան չեմ հասկանում, Մարիա:

ՄԱՐԻԱ

Դու չես հասկանում... դեռ ևս չես հասկանալ... (Գրիգոր Արամիչին) Իսկ դուք կրկին այստեղ էք... (հանկուղ) Գէորգ... Գէորգ...

ԳՐԻԳՈՐ ԱՐՐԱՄԻՉ, հնազանդ

Ա, ա, գնում եմ տիկին, գնում եմ... ներողութիւն...

ՏԵՍԻԼ 9.

ՄԻՒԱԻԼ ԵԳՈՐԻԶ, ՄԱՐԻԱ ԵՒ ԳԵՈՐԳ

ԳԵՈՐԳ, ներս հարնելով

Հրամայեցէք տիկին:

ՄԻՒԱԻԼ ԵԳՈՐԻԶ, առանջին

Այ բան... մի երկու ժամ սորանից առաջ խեղճին ես քօթակեցի, իսկ հիմա էլ սա է դուս անճամ... (Մարիային) Բայց ի՞նչ կնշանակէ այդ Մարիա:

ՄԱՐԻԱ.

Դու քո մարդերին չես ճանաչում. դու միամիտ ես և կարծում ես, որ ամենքն էլ քեզպէս են...

ՄԻՒԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Բայց ամենահաւատարիմ բարեկամս, անկեղծ ընկերս, մի՞ թէ չգիտես որ նա էր:

ՄԱՐԻԱ.

Գիտեմ, գիտեմ սիրելիս... բայց ինչ որ ես գիտեմ՝ դու չգիտես... դու գլտես նորան ազնիւ, իսկ ես փորձեցի և գտայ անազնիւ. դու ճանաչում ես նորան հաւատարիմ, անկեղծ, եղբայրասէր. իսկ ես հասկացայ և համոզուեցի որ անհաւատարիմ, կեղծաւոր և եղբայրատեաց մարդ է նա:

ՄԻՒԱԻԼ ԵԳՈՐԻԶ, զարնայած

Բայց ի՞նչպէս, ասա խնդրեմ...

ՄԱՐԻԱ.

Ասեմ, ասեմ հոգիս, բայց հեռու նմանութիւններով, ասեմ առակներով և զուարճաստութիւններով, չե՞ս բարեհաճիլ գնանք իմ սենեակս, այնտեղ ես քեզ մի առ մի կբացատրեմ—բայց կբացատրեմ այնպէս, ինչպէս նոր ասացի:

ՄԻՒԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Գնանք, գնանք...

ԳԵՈՐԳ

Պարոն, տիկին...

ՄԻՒԱԻԼ ԵԳՈՐԻԶ և ՄԱՐԻԱ

Հի՛, է՛լ ինչ:

ԳԵՈՐԳ

Ո՛չ ինչ:

ՄԻՒԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ապա էլ ինչ ես ուզում:

ԳԵՈՐԳ

Մի երկու խօսք եմ կամենում ասել ձեզ, միայն խնդրեմ...

ՄԻՒԱԻԼ ԵԳՈՐԻԶ և ՄԱՐԻԱ.

Ասա:

ԳԵՈՐԳ

Խնդրեմ չնեղանալ և ներել ինձ...

(Միտալի եզրիչ և Մարիան առաջ իրար երես են նայում):

ՄԻՒԱԻԼ

Ի՞նչ է, ասա:

ԳԵՈՐԳ

Ես հիմա կամենում եմ աւելի հալալութիւնով և խոհեմութիւնով ծառայել ձեզ, նո-

րա համար թոյլ տուեցէք ինձ յայտնել և խոստովանել իմ մեղքերը...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Այդ մեր գործը չէ մեզ չէ պատկանում քահանայի պարտականութիւն է այդ:

ԳԷՈՐԳ

Բայց ձեզ է վերաբերում:

ՄԱՐԻԱ

Դէ առաջ էլ ի՞նչ ես մեզ երկու երկու փորացաւ գցում:

ԳԷՈՐԳ

Ձեր միջի կռուապատճառը ես էի...

ՄԻԱՍԻՆ

Ի՞նչպէս...

ԳԷՈՐԳ

Միայն խնդրեմ...

ՄԻԱՍԻՆ

Ասա, առաջ:

ԳԷՈՐԳ

Ամեն օր շարմանկա բերել տվողը ես էի, ձեր պալտօ ու խալաթ, ձեր ծածկովի ու շըլեապան գողանալ տվողը ես էի, նախաճաշը այտեղ պատրաստողը ես էի... մի խօսքով՝ ես էի ես էի ու ամենն էլ ես էի...

(Միտալի եզրիչը և Մարիան դարմացած և մոլորուած նայում են իրար երեսի):

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ա՛յ զու անպիտան կենդանի... մի՛ թէ զու մի փոքր չխղճացիր, և ի՞նչպէս հանդգնեցար

զու մեր սէրը և հանգստութիւնը վրգովել... զուրս, զուրս և աչքիս այտուհետեւ չերևաս:

ԳԷՈՐԳ

Ո՛չ, ես ձեր այդ վճռին համաձայն չեմ...

ՄԱՐԻԱ

Ի՞նչպէս թէ...

ԳԷՈՐԳ

Այնպէս որ ես մինչև հիմայ ծառայել եմ կեղտոտութեամբ՝ ինձ պահում էիք, իսկ հիմայ վարվելու եմ, ծառայելու եմ, ազնվութեամբ՝ հիմա ինձ զուրս էք անում: (Ելն էլ հալ-լա՛մ էն):

ՄԱՐԻԱ

Այ սատանայ:

ԳԷՈՐԳ

Բացի գորանից զուք ձեր խօսքի տէրը չէք:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, Ժպտում

էս էլ նոր խայտառակութիւն:

ՄԱՐԻԱ

Ի՞նչպէս:

ԳԷՈՐԳ

Այնպէս որ մի կէս ժամ սորանից առաջ՝ զուք առանձին, զուք էլ առանձին, խոստացար ինձ վարձատրել և պահել մինչև ձեր կեանքի վերջը, իսկ հիմայ վարվում էք բոլորովին հակառակ...

(Եկուքն էլ դարմացած ծիծաղում են):

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Այդ բաները որ անուժ էիր, հարբած խօս՝
չե՞ս եղել...

ԳԷՈՐԳ

Ընդհակառակն, պարոն, մտքիս ամենամա-
քուր ժամանակին եմ ես արել...

ՄԱՐԻԱ

Բայց ի՞նչ էր պատճառը...

ԳԷՈՐԳ

Պատճառն այն էր որ, տիկին, դուք մի եր-
կու՛ շաբաթ սորանից առաջ կամենում էիր ինձ
դուրս անել, իսկ ես խոստովանում եմ, տիկին,
որ դուրս գնայի ի՞նչպէս կարող էի մի օր կեանք
վարել առանց... իմ... Ան... սիրոյ առարկայի:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ասա՛... դու ուրեմն սիրոյ առարկայ էլ
ես ունեցել—ո՞վ է, ասա՛, ասա՛: Այ որտեղից է
կծիկը բացուել:

ԳԷՈՐԳ

Այո՛ պարոն, ես սիրում եմ Աննային և նա
էլ ինձ:

ՄԱՐԻԱ

Եթէ այդպէս է, ուրեմն ինչո՞ւ առաջ չէ-
իր ասում:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Տեսէք թէ ինչ հնարներով են հասնում իւր-
եանց նպատակին... ա՛յ նզովուածներ:

ԳԷՈՐԳ

Առաջ ասէի՞... ի՞նչ ասէի, երբ ինձ դուրս
անել էիր կամենում—առաջ երեստեղ ունէ՞ր որ:

ՄԱՐԻԱ, ԶԻՅԱԿԷԼՈՎ

Հիմա երեստեղդ շատ է՛:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ձէ, Մարիա ջան, պիտի ուշ դարձնել.—մի
լաւ հասկացիր թէ ինչ հնարներ են: (Տիջոյ) Թէ
որ այդպէս է, կանչիր, Գէորգ, Աննային, բայց
իմացիր, որ այս պիտի լինի առաջին և վերջին
օրինակը, ապա թէ ոչ՝ զգոյշ կաց հա՛... էլ
ձեռքիցս չես պրծնիլ:

ԳԷՈՐԳ

Յուսով եմ, պարոն, որ երբէք չպիտի մո-
ռանամ ձեր արած լաւութիւնը, իմ անխոհեմ
վարմունքի դէմ և ի սրտէ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Գէ գնա, գնա, շուտ կանչիր Աննայիդ:

Գէորգը մտնում է դռանը և կանչում է Աննային, որը և
ներս է մտնում:

ՏԵՍԻԼ 10.

ՆՈՅՆՔ ԵՒ ԱՆՆԱ

(Միտաի Եգորիչը և Մարիան աննդհատ ժպտով նայում են
նորա երեսին, նա կարմրում է):

ՄԱՐԻԱ, ԱՆՆԱՅԻՆ

Ուրեմն դուք էլ էք այդպիսի բաներով պա-
րապում հա՛... ա՛յ անպիտաններ: Եւ եթէ այդ-

պէս բան կար, ինչո՞ւ չէիք ասում, քան թէ մեզ, էն էլ մեզ էիք կռուացնում:

ԳԵՈՐԳ, չրեւի՛

Կռուացրեցի էլ—հաշտացրեցի էլ: Ներողութիւն պարոն և տիկին:

ՄԱՐԻԱ

Ուրեմն դուք իրար սիրո՞ւմ էք:

ԳԵՈՐԳ և ԱՆՆԱ, յապի՛

Այո...:

ՄԻՍԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Եթէ այդպէս է՝ պատրաստուեցէք վաղը եկեղեցի գնալու. ձեր պատկը լինելու է իմ ծախքով... բայց զգուշացէք, զգուշացէք ապագայում, ի հակառակ դէպս... (ճապով սաստիկ զրնամ է Մարիայի հետ նոր սենեակը):

Տ Ե Ս Ի Լ 11.

ԳԵՈՐԳ ԵՒ ԱՆՆԱ

ԱՆՆԱ, յապի՛

Բայց պէտք է ասել, որ դու էլ բարի պրտուղ չես:

ԳԵՈՐԳ, նոյնպէս՝

Ինչ անեմ, ինչ անեմ, իմ կողմով վարդս, եթէ այդպէս չանէի այսպէս կվերջանար... բայց հա, ոնց թէ մոռացայ (վաղում է ինչ սենեակը, ինչ Աննան բեթի վերայ նայում է դռնովը թէ ինչ է անում նա):

ԱՆՆԱ

Գէորգ, ի՞նչ բանի վերայ ես էլի արաղի շիշը ձեռքիդ:

ԳԵՈՐԳ, ինչպէ՛ս ես եմ

Ոչինչ, ոչինչ, Աննա ջան, ուզում եմ մի տեսնել թէ ինչքան է մնացել արաղը...:

ԱՆՆԱ

Արի, արի այստեղ մի երկու խօսք ասեմ: (Ներս է գալիս Գէորգը յետին գիւղարար և մի շէշ առաջ): Ահա ես քեզ ասում եմ, ասում եմ վերջնական՝ էսքանի մօտ (չոյց ասելով հանդիսակցներին) որ եթէ դու այսուհետեւ պիտի շարունակես գինի, արաղ խմելդ—ես այժմէն իսկ հեռանում եմ:

ԳԵՈՐԳ

Ահա իմ վերջին ուխտս Աստուծոյ, քո և այսքանի առաջ, որ այսուհետեւ ես գինի արաղ գործ չեմ գնիլ, իսկ եթէ գործ ածեմ՝ թող Աստուածային անէծքը թափի վերաս—բաւակամ ես:

ԱՆՆԱ, ինչո՞ւ և սիրով

Այ, այ, այ, էդպէս մի ասիլ:

ԳԵՈՐԳ

Բայց մի բան կայ. ես էս մեր ուրախութեան շնորհաւորէքը չպիտի...—որ երկնքից հրեշտակ վերգայ, իսկ դժոխքից սատանայ դուրս գայ՝ ես էս մէկը (առէլով յոսիկ) պիտի վայելեմ պիտի կոնծեմ ու գողամ. Աստուած շնորհաւոր անի (կուլ է ասելիս):

ԱՆՆԱ, սիրով

Լաւ էս մէկին իրաւունք ունես:

Տրիստրալ լեռ-1

ԳԵՈՐԳ, Էրգոս՝ է *):
 Ճես. վերջապէս մտածածս
 Ահա գլուխ բերեցի,
 Իմ վաղուցվան ջերմ փափագս
 Ես ի կատար հասուցի:
 Տուր ինձ ձեռքդ, իմ սիրուհի,
 Տուր ինձ սիրող պարզերես,
 Վաղը որ սուրբ եկեղեցում
 Մենք միանանք պարզապէս:
 ՄԻԱՍԻՆ, յե- յե-ի պո-աժ
 Մեծ չարչարանք և նեղութիւնք
 Անցան մեզնից, հեռացան.
 Քաղցր ժամեր, բարօրութիւնք
 Մեզ ժպիտով մօտեցան:
 Դէ, մի համբոյր (համբոյր) և ապա պար
 Վինին վկայ մեր սիրոյն
 Թող քաղցրաձայն հնչի գիտար
 Յանդօրրութիւն մեր հոգւոյն:

Մի և նոյն եղանակը, բայց աւելի յորդոր, Գէորգը ածում է
 զիտարի վերայ, մեծ շարժմունքով, իսկ Աննան պար է գալիս: Մի
 փոքր յետոյ Գէորգն էլ է խառնուում պարի մէջ, մի և նոյն ժամա-
 նակ ածում է զիտարը: ՏԵՍԱՐԱՆ—աշխուժով պար:

Վարդապետը համայն իջնում է:



Մարտի 1897
Մ

2013

(*) «Запрату я тройку борзыхъ» երգի եղանակով:

